



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9370

Ժ. ՄԵՅԵՐԶՈՆ

ԿՈՒՍԱՇԻԱՏԱՆՔԸ
ՆԵՐԿԱԵՏԱԳՈՒՄ

ՄԱՍ I

ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3K.05

Կ-60

25 SEP 2006

1 DEC 2009

ՅԻՔԻՏ
Կ. 60

ժ. ՄԵՅԵՐՁՈՆ

ԿՈՒՍԱՇԻԱՏԱՆՔԸ
ՆԵՐԿԱ ԵՏԱՊՈՒՄ

1007
30057

ՄԱՍ I

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քարզմ. Գ. Արամյան

Հայերեն խմբագր. Ս. Գրիգորյան

13560



984789

808448

20 JUN 2013

9370

Պետերատի տպարան
Գլավիխ 7001 (բ)
Հրատար. 1953
Պատվեր 6421
Ցիքամ 3000



54134-66

ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՐԿԱՆ ԵՏԱՊՈՒՄ¹⁾

«Սոցիալիստական շինարարության հսկայական թափը, մեզ առաջադրված կարևորագույն խնդիրները պահանջում են համապատասխան թափ և վերադասավորում մեր կազմակերպչական աշխատանքների»: Հընգամյակի յերրորդ վճռական տարին իր ամբողջ սրությամբ ընդգծեց 16-րդ կուսամագուստարի առաջ ընկ. կազանավիչի բարձրացրած այդ հարցերի ակուտությունը: Հնգամյակի յերրորդ տարին, — այն տարին, վորը ընթացքում մենք լուծում ենք մեր դարդացման մի շարք ամենարարչ խնդիրները և ավարտում ենք սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը, — պահանջեց խոշոր տեղաշարժ կատարել նաև կուսակցական աշխատանքների բնագավառում, պահանջեց սոցիալիստիկ բարձրացնել նոր, ավելի բարձր աստիճանի վրա:

Անհրաժեշտ է կուսակցական մարմինների դեկավարաթյունից միանգամայն անխնա կերպով դուրս անել դեկլարատիվության տարրերը: Անհրաժեշտ է անխնա պայքար հայտարարել «բնդհանրապես, բոտ ամբողջության, հիմնականում» զեկավարության, յերբ իրականությունից «կտրվում» են այն բնդհանուր արտահայտություններով, վորոնք կորցրել են արտահայտչական և բնդհանրության ամբողջ սրությունը և այլն: Պետք է բոտ է լուծյան թղթա-գրասենյակային նման զեկավարությանը նայել վորպես վատթարագույն բուրուկրատիզմի, վորը խանդարում է տվյալ ետապի շինարար-

¹⁾ Երկա գրքույկից առանձին կրճատված հատվածներ տպագրված են «Правда»-ի 1931 թ. հունիսի 7-ի և 11-ի համարներում: Հեղինակ.

բությանը: Անհրաժեշտ է այդ հայեցակետով վերից վար ստուգել կուսմարմինների ամբողջ աշխատանքները:

Կուսակցական կազմակերպութեան ղեկավարութունը պիտի լինի կոնկրետ: «Պետք է ընդգծել, վար ղեկավարութեան կոնկրետութունը ներքինում հանդիսանում է կենտրոնական և վճռական պայմանը՝ ստուգելի թվերը կյանքում հաջողութեամբ իրականացնելու համար» (Կազմակերպություն): Կուսակցական կազմակերպությունները պետք է տեղակալ լինեն «գործարանի, ֆաբրիկայի, հանքերի ֆինանսների, անտեսութեան, տեխնիկային», մանրամասնորեն իմանան արտադրութեան ամբողջ ընթացքը և այդ հիման վրա ղեկավարեն կոնկրետ կերպով: Հարկավ կուսմարմինները, այդուհանդերձ, չպետք է «խոսեն» ընթացիկութեան մեջ, ընկնեն մանրուքների հետևից, փոփոխեն անտեսարանների գործառնական ղեկավարութեանը և խախտեն միանձնյա ղեկավարութեան սկզբունքները: Վոչ, կուսակցական կոնկրետութեանը դրանում չի կայանում: Դրա ավելի բնորոշ գիծն արտահայտվում է այն հիմնական, առանցքային մոմենտների («վճռողական ողակներ»), հանդուգային խնդիրների և հարցերի ամենուրեք և անմիջական ղեկավարութեամբ, վորոնց հետ պետք է ամուր կերպով կապել այսօրվան մանրամասնութեանների ամբողջ մասան:

Կուսակցական կազմակերպութունների ղեկավարութունը պիտի է ձեռնառնա լինի: Վոչ մի «սահունութուն», ընդհանուր դատողութուններ, ձեռնառն, շարունակապես արտահայտություններ: Կուսմարմինները պետք է գիմաղարձ լինեն ղեկի մասանների փորձը, հանուսանան այդ փորձի յուրատեսակ ակիւսմույթատրները, ընդհանրացնեն և վերամշակեն այդ փորձը: Ահա և կուսմարմինների կողմից արտադրութեանը և տեխնիկան տիրապետելու, կոնկրետ կերպով ղեկավարել կարողանալու ուղիներից մեկը: Անհրաժեշտ է ամբողջ աշխատանքները վերադասարկել այդ հայեցակետով, ամենուրեք առաջին տեղը դնել մասանների

փորձի հաշվառումը, դրա ընդհանրացումը, լավագույն ձևերի և ուղիների տարածումը և այլն:

Վերոպայես կուսակցական ղեկավարութունը պիտի է ավելի ուղեբառով լինի: Իրական կատարման ստուգումը պետք է ամբողջ կազմակերպական աշխատանքների հիմնական սկզբունքը դառնա: Դրանում է կայանում կուսակցարատի անցկացված վերակազմակերպման իմաստը: Դրան համապատասխան էլ պետք է կառուցվի ամբողջ ընթացիկ պրակտիկան: Ժամանակ և այստեղ վորպես կանոն ձեռնարկել Լենինի և Ստալինի հետևյալ ցուցմունքներին:—

«Մեզ մոտ բանաձևերն այնքան են կուտակվել, վոր վոչ վոք վոչ միայն չի կարող կարդալ, այլև չի կարող հավաքել: Մենք պետք է դրադիմք գործով, վոչ թե բանաձևերով...»¹⁾:

«Մանրութեան կենտրոնը փոխադրել մարդիկ ընտրելու և փաստական կատարումն ստուգելու վրա...» (Լենին):

«Ղեկավարութեան հիմունքը կայանում է վոչ թե բանաձևեր մշակելու, այլ դրանք անցկացնելու, դրանք կենսագործելու մեջ... Կուսակցական ղեկավարութեան ելուցքները կայանում է հենց բանաձևերի և հրահանգների կատարման մեջ» (Ստալին):

«Գրվում են բանաձևեր, ուղարկվում են հրահանգներ, սակայն վոչ վոք չի մտածում այն մասին վորպեսզի հարցնի իրեն. իսկ ի՞նչ դրութեան մեջ է գտնվում բանաձևերի և հրահանգների կատարման գործը, կատարվում են արդյոք դրանք իրականում, թե՞ դրվում են մահուգի տակ...» (Ստալին):

Իհարկե, վորոչ չարժու կա նշված ուղղութեամբ, բայց տեղերում դեռ բեկում չի առաջացել: Իսկ այդ բեկումը պիտի ստեղծել առաջիկա ժամանակամիջոցում, թեկուզ ինչ էլ լինի:

Քննութեան առնենք, թե ավայտ ետապում ի՞նչպես պետք է ընթանա կուսաշխատանքների վերակառուցումը: Այդ ուղղութեամբ ի՞նչպիսի փորձ է կուտակվում

1) Լենին, հատ. XVIII, մաս 1, էջ 280:

տեղերում: Մեր ամբողջ գործնական աշխատանքների համար ի՞նչպիսի դասեր պետք է վերցնենք տեղերի փորձի հաշվառումից:

Այս բոլոր խնդիրները պետք է դառնան կուսաշխատողների քննութեան առարկա: Կանգ առնենք զբանսց հետ կապված մի քանի մոմենտների վրա:

ՊԼԱՆԸ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Մենք թեևակոխել ենք սոցիալիզմի սկզբնական շրջանը, յերբ խորհրդային տնտեսութեան սոցիալիստական հատվածը դառել է փոչ միայն առաջատար, այլև գերակշռող, յերբ արմատախիլ է արվում կապիտալիստական վերջին դասակարգը՝ կուլակութիւնը: Հսկայական չափով աճել է մեր տնտեսութեան պլանայնութիւնը: Արդյունաբերութիւնը և առևտուրը, վորտեղ ամբողջապես յուծված է «ով-ումի» հարցը, լրբիվ կերպով ընդգրկվում է մեր պլանավորմամբ: Իսկ գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը, վորը վոչնչացնում է գյուղատնտեսութեան դարբերի ցոյածութիւնը, հնարավորութիւն է տալիս պլանային ղեկավարութեամբ ընդգրկել նաև սեփականատիրական տարրերի այդ «ամբողջը»: Այդ կապակցութեամբ 1921 թ. առանց առեն փոչ թե վերականգնման շրջանի պլանային ուղղվաղիծ է, վոչ թե վերակառուցման շրջանի առաջին տարիների ստուգիչ թվեր է, այլ միասնական ժողովրդական տնտեսութեան պլան, վորը պարզորոշ ուղիներ է դժում յերկրի վողջ տնտեսութեան զարգացման համար:

Դրա հետ միասին մենք ներկայումս ապրում ենք նեղի վերջին շրջանը: Չհամայնացված բաժանանին մեծ շրջապատող գոյութիւնը և կոյտնտեսութիւն մտած գյուղացիների մոտ անհատական տնտեսութեան վորոշ տարրերի գոյութիւնը պայմանավորում է ներկա հասարակ վորոշ շուկայական հարաբերութիւնների պահպանումն՝ աշատեղեց բղիտող բոլոր հետեանքներով: Կուսակցութիւնը վճռականապես պայքարում է շուկա-

յական հարաբերութիւնների վրայից բոլոր տեսակի ցատկումների— ավտոմատ կերպով ըստ պլանի վարկավորելու, կոոպերացիայի կողմից անմիջապես ապրանքափոխանակութեան անցնելու, փողի նկատմամբ հասարակ հաշվենիշի տեսակետ ունենալու դեմ և այլն: Կուսակցութիւնը համայնացված սեկտորում տնտեսական ղեկավարութեան հիմնական ողակը ներկա ետուպում համարում է տնտեսական հաշվարկը և դրա հիման վրա շինարարութեան ամբողջ գործնականը ուղղելով ստուգելը:

Տվյալ ետապի տնտեսական հաշվարկն եյականապես տարբերվում է վերականգնման շրջանի տնտեսական հաշվարկից: Յերկրում տնտեսական հինգ ձևերի գոյութիւնը և մանր ասլրանքային արտադրութեան գերակշռումն այն ժամանակ վորոշ ասպարեց եյին տալիս շուկայական տարրերին, սահմանափակում էյին պլանային տարրերի դերը տնտեսական ղեկավարութեան մեջ և համապատասխան կնիք էյին դնում տնտեսական հաշվարկի վրա: Տվյալ շրջանի տնտեսական հաշվարկը, յերբ հսկայական չափով աճել է տնտեսավարութեան սխտեմի պլանայնութիւնը, հանդիսանում է պլանի բաղադրիչ տարրը: Տնտեսական հաշվարկը ներկա ետապում՝ դա պլանի տարրն է: Այս բանը չեն հասկանում աջ և «ձախ» ոպորտունիստները, վորոնք ջանում են պլանը հակադրել տնտեսական հաշվարկին: Առաջինները ժխտում են, վոր Միութիւնը թեևակոխել է սոցիալիզմի շրջանը, զրա հետ միասին սվաղում են պլանայնութեան գերը ժառանգակից շրջանում և տնտեսական հաշվարկին տնտեսութեան ղեկավարման ունիվերսալ գործիքի բնույթ են տալիս: «Չախերբ» սոցիալիստական սեկտորի աճման և մեր տնտեսութեան պլանայնութեան մեջ տեսնում են արդեն տնտեսական հաշվարկի վերացում, սվյալ ետապի պլանավորմանը նաշում են վորպես կատարյալ սոցիալիստական և հանդում են ներկա ետապի ժխտման՝ վորպես նեղի ետապի:

Ի՞նչպես են անդադառնում կուսակցական աշխատանքի վրա Միութեան ապրած զարգացման շրջանի

բոլոր առանձնահատկությունները: Ի՞նչպիսի նոր պահանջներ պետք է առաջադրենք կուսաշխատանքներին տվյալ ետապում:

Առաջին հերթին պետք է դրվի կուսաշխատանքների կառուցման մեջ խիստ պլանայնության անհրաժեշտությունը խնդիրը: Պլանայնություն՝ վոչ թե կուսաշխատանքների խնդիրները բյուրոկրատորեն առանձին դարակներով դասավորելու իմաստով (պլան թխել), այլ կուսակազմակերպչական աշխատանքներն ավելի խոշոր չափով պլանի և տնտեսական շինարարության հետանկարները հետ կապելու իմաստով: Բերենք մի քանի որինակներ, վորոնք պարզում են նման կապի բացակայությունը:

Կուսակցության ամուրը նորակառույցներում: Արդուն առերական յինարարությունը ծավալվում է հսկայական չափով: Տեղի յե ունենում պրոլետարական նոր կենտրոններ և ոջախներ ստեղծելու պրոցեսը: Այդտեղ հավաքում են տասնյակ հարյուր-հազարավոր նոր բանվորներ. այստեղ է փոխադրվում նաև հին արդյունաբերական շրջանների բանվորների կազրային կազմի մի մասը: Այսպիսով Միություն մեջ փոխվում է բանվոր դասակարգի աշխարհադրական տեղադրությունը, վորը տեղի յե ունենում ընկ. Ստալինի կողմից 16-րդ կուսահամագումարի առաջ դրված «նՄՀՄ մեջ արդյունաբերությունը ճշտորեն տեղավորելու» խնդրի լուծման գուռահեռ: Այդ պրոցեսի չափը կարելի յե վորոշել նրանով, վոր հնգամյակի առաջին տարում գործի յեն գրվում 518 նոր ձեռնարկություններ, նույն թվում մի շարք այնպիսի հսկաներ, ինչպիսին են Մագնիտոգորսկու և Կոզնեցկու գործարանները, Ուրալի մեքենաշինարարական գործարանը, Բորբիկի և Աոստովի Գյուղմեքշինը և այլն:

Նոր ձեռնարկություններում կուսակազմակերպություններ ստեղծելու հարցը դրվում է բավականին սուր կերպով: Օրվա վոր առաջին տարիներում գրանցում են նորոնացվելու յե Միության բանվոր դասակարգի նշանակալից մասը: Այստեղ մի շարք կուսակցական նոր

կենտրոններ են ձևավորվելու: Դրանում իր արտահայտություն են գտնելու մեր կուսակցություն «աշխարհադրական բարեփոխում» փոփոխման յուրահատուկ պրոցեսը, վորը բղխելու յե Միության բանվորական մասսաների հիշված վերադասավորման պրոցեսից: Թերագնահատել այդ պրոցեսը և նոր ձեռնարկություններում կուսակցական կազմակերպություններ ստեղծելու գործում մասնակի ինքնահոսի, — նշանակում է չհասկանալ, թե տվյալ պայմաններում կուսակցություն ամձման հարցը լուծելիս մասնավորապես ինչ՞ում պիտի արտահայտվի բայրևիկյան կազմակերպվածության կարևորագույն դիժը՝ զարգացման հեռանկարների հաշվառումը:

Հարցի սրությունն արտահայտվում է նաև մի այլ կողմից: Առանց կուսակցական ուժեղ կորիզի հնարավոր չէ ապահովել նոր ձեռնարկությունները ժամանակին գործի դնելը և անընդհատ աշխատանքը: Հատկապես է արդյոք ավելի ցայտուն որինակ, քան Ստալինգրադի արակտորային գործարանը: Աշխատանքի անցնելիս այստեղ տրակտորներ արտադրող հիմնական ցեխերում (մեքենա-հավաքողական, ճուրարանային, դարբնոցային, տերմիջական) դրեթե կոմունիստ-արտադրողներ չկային: Անդամ հոկտեմբերին, այսինքն՝ գործարանն աշխատելու տրից չորս ամիս հետո, դարբնոցային ցեխի բլիջում ընդամենը կային միայն 8 կոմունիստներ, վորոնք գրադամ ելին արտադրության մեջ, ձույարանային ցեխում կային 15 կոմունիստներ և այլն: Այնուհետև մորքահան թանգ նստեց մեկ վրա կուսակազմակերպություն այդ սակավաթիվ և թույլ լինելը, նրա անձեռնահասությունն ամերիկյան տեխնիկային տիրապետելու գործում և նրա անողնակամությունը տեխնիկական թեություններին դեմ պայքարելու գործում: Յեվ նման որինակները բացառիկ չեն: Այս բոլորն ասում են այն մասին, վոր անհրաժեշտ է իր ժամանակին ամուր կազմակերպություններ ստեղծել բոլոր նոր կառուցվող ձեռնարկություններում:

Այժմ տեսնենք, թե մեր կուսակցության ամձման խնդրում վորքան ինքնահոսի և տարերայնություն

ըրևակներ կան նորակառույցներում: Չնայած Կենտրոնի բաղաձայնիվ հրահանգներին, մինչև վերջերս նորակառույցներում հին ձեռնարկությունների լավագույն կազմերից սակզծված չէր կազմակերպության կմախքը: Անհրաժեշտ չափով ծավալված չի յեղե նորակառույցների լավագույն հարվածափններին կուսակցության շարքերը ներդրավելու աշխատանքը: Հետևանքը յեղել է այն, վոր, ինչպես կանոն, նորակառույցներում սակավաթիվ են կուսակազմակերպությունները, — կուսակրական խավը միջին թվով հասարակ է 5-6 տոկոսի (Մազնիստոգորսի—6.5 տոկոսի, Չեյարարույ—5 տոկոսի, Պուտիլստորյ—2 տոկոսի, ԱՄՌ—ի շինարարությունում— 2 տոկոսի, Բորրիկում— 1տոկոսի և այլն): Դրա հետ միասին կոմունիստների մեծ մասն ստացված են վարչատնտեսական ախատանքներում և միայն աննան մասն է զբաղված անմիջապես շինարարության մեջ: Այսպես որինակ, Բորրիկում 564 կոմունիստներից արտադրության մեջ աշխատում են 151 հոգի (21 տոկոս), Չեյարարույում 900 կոմունիստներն անմիջականորեն շինարարության մեջ զբաղված են միայն 40 հոգի: Նույն դրությունն է տիրում նաև շինարարությունների մեծ մասում: Կուսակազմակերպության կամեն բնոհանուր ամամս շատ յերևատարդ է. մեծ տոկոս են կազմում թեկնածուները: Այսպես, Պարկովի արակտորաշինում կուսակցության անդամներն 40 տոկոսը 1928 թվից են, Ամատչենում 1928 թ. կուսանդամները կազմում են 39 տոկոս և 40 տոկոս կազմում են կուսթեկնածուները, Սարատովի կոմբանշինում թեկնածուները կազմում են 50%, իկ կուսանդամներն 46 տոկոսը 1928 թվից են և այլն: Դրա հետ միասին կազմակերպության կազմը շատ հաճախ խախտարդիտ է: Բավական է հիշատակել, վոր նորակառույցների կուսակազմակերպություններում համեմատաբար բարձր է տուգանվածների տոկոսը: Այսպես, Բերենտսի շինարարությունում 1931 թ. սկզբին պատասխանատու ախատակիցների 40 տոկոսը գանազան տուգանք ունեյին: Մազնիստոտորյում 12 զեկավար տըն-

տեսավարներից 7-ը բավականին լուրջ կուստուժեր ունեյին և այլն: Այսպիսով Միության ինդուստրացման հակաական թափն իր անհրաժեշտ արտահայտությունը չի գտնում նոր ձեռնարկությունների և նոր շրջանների կուսակցության կազմակերպված ամման մեջ: Կուսակցության առումը բավարար չափով կազմակերպչորեն կապված չէ Միության ինդուստրացման պլանի և հեռանկարների հետ:

Նույնպիսի դրություն է տիրում նաև առանձին նոր ձեռնարկություններում: Կոմունիստների անհավասար բաշխումն այստեղ շափազանց մեծ է, և հաճախ վճռական գործարանի զարգացման հեռանկարների տեսակետից. ցեխերում կուսխավը վորակապես և քանակապես ավելի թույլ է: Որինակ՝ Պարկովի արակտորաշինում դարբնոցը և մեքենահավաքողական ցեխը վոչ մի կոմունիստ չունեն, ճուլարանային ցեխը 834 բանվորների դիմաց ընդամենը 10 կոմունիստ ունի, իսկ գրանք հենց այն ցեխերն են, վորոնք վորոշում են արակտորային գործարանը գործի զցելու բախտը: Բերեգնայակի շինարարության ավելի պատասխանատու ճյուղում Չերմելեկտորկենտրոնում, վորը Միության մեջ ամենազորեղն է լինելու (80 հազ. կվա. 60 միլուլորտի ճնշամար), 800 բանվորների դիմաց ընդամենը 15 կոմունիստներ կան: Նիժեգորոգի ավտոշինում, վորտեղ կուսխավը միջին թվով 9.7 տոկոս է կազմում, ուժային յեկնակայանում և մեքենահավաքողական ցեխում բոլորովին կոմունիստներ չկան. Զբանոգ. նում կուսխավը կազմում է ընդամենը 2 տոկոս և այլն:

Կուսակազմակերպությունների շինարարության մեջ ինքնահոսն արտահայտվում է ամենապարզ ու խիստ կերպով, զբսևորելով նորակառույցներում կուսակցության ամման անբավարար կապն այդ գործարանների պլանի և զարգացման հեռանկարների հետ:

Յերբեմն նույնիսկ թույլ կերպով է շտկապված կուսակցական աշխատանքների բավանդակորյունը ավայ շրջանի կամ ձեռնարկության տնտեսական զարգացման հեռանկարների հետ: Բերենք մի որինակ, վորը

ցույց և տալիս, թե առանձնապես ինչպիսի խիստ, ա-
կրնբախ և ցայտուն կերպով և արտահայտվում այդ կա-
պի բացակայությունը: Վերջիննք կուսակցություն կհ
կողմից հետազոտման յենթարկված (1930 թ. վերջին)
Կուզբասը:

Կուզբասում դարմանք և պատճառում առաջադրված
ինդիքներին հսկայական ծավալի և աշխատանքների ըն-
թացքի միջև յեղած անհամաչափությունը: Իրական-
նում առաջիկա տարիների ընթացքում պետք և կառուց-
վել մեքենայացված նոր Կուզբասը, վորը տալու յե չորս
անգամ ավելի շատ ածուխ, քան ներկայիս Կուզբասը:
Միքանի հանքերում բանվորների թիվը կրկնապատկ-
վում և, արդեն 1931 թ. ընթացքում միքանիսներում
անգամ յեռապատկվում և:

Մրանք տեմպեր են, վորը չի տեսել անդամ Խոր-
հրդալին Միությունն՝ իր վերակառուցման պրոցեսի
բունն և ուժգին ընթացքով:

Դրա հետ միասին Կուզբասն աշխատում և անբա-
վարա՞ իր բոլոր ցուցանիշներով: 1931 թ. առաջին
յեռամսյակում ծրագիրը կատարված և բնդամներ 71
տոկոսով, ինքնարժեքը բավականին դարձր և պլանից, յա-
ծուխի վորակը վատ և, և այնտեղ մոխրի տոկոսը տեղ-
տեղ հասնում և 11-12 տոկոսի: Միանգամայն պարզ և,
վոր Ուրալա-Կուզնեցի կոմբինատ ստեղծելու մասին,
վոր լինելու յե Միության յերկրորդ անխա-մետողա-
գործական բաղան, — կուսակցության 16-րդ համարու-
մարի պատմական վորոշումն իրագործելու համար դեռ-
ևս համապատասխան տեմպեր չեն վերցված:

Վորո՞նք են Կուզբասում աշխատանքների անբավարա-
րության պատճառները: Այստեղ հիմնականն այն և,
վոր Կուզբասի կազմակերպությունը դեռևս յերեսով չի
դարձել գեպի Կուզբասի վերակառուցումը: Կուզբասի
կազմակերպության աշխատանքների մեջ բավականին
ուժեղ կերպով են արտահայտվում անհեռանկարու-
թյանը, ինքնահոսք և «առանց դեկի և առաջատի» աշ-
խատանքները:

Նոր Կուզբասը կառուցվում և աշխատանքների բա-

լոր պրոցեսների մեքենայացման հիմունքով: Կուզբասի
բնորոշ առանձնահատկությունը կայանում և նրանում,
վոր նրա բաղան լինելու յեն գլխավորապես մեքենայաց-
ված նոր հանքերը, ուր 1933 թ. ածխի արտադրու-
թյան հազարավելու յե անխի ամբողջ արտադրու-
թյան 90 տոկոսին: Մեքենայացման յենթարկելը և նոր մեքե-
նայացված հանքեր կառուցելը, — հաս սրանք են Կուզ-
բասի վերակառուցման առանցքային մոմենտները:

Իսկ դրա հետ միասին, մինչև վերջերս Կուզբասի
կազմակերպությունները դիմադարձ չեն յեղել դեպի
այդ յնդիքները: Կազմակերպություններն ապրել են
ընթացիկ գործերով, նրանք աչքաթող են արել այն,
ինչ ներկայումս Կուզբասում հանդիսանում և ամենա-
գլխավորը, այն և՛ նրա վերակառուցման ուղիները:
Այդ վաղվա Կուզբասը նրանք չեն տեսել, նրան չեն
պատրաստել և նրա յնդիքների տեսակետից չեն վերա-
կառուցել իրենց աշխատանքները:

Դրանից հետո բնական են՝ Կուզբասի անբավա-
բար աշխատանքները, մեքենայացման չափազանց ցածր
արդյունքները, նոր հանքերի կառուցման դանդաղ ըն-
թացքը և այլն:

Վերջիննք յերկրորդ, վոչ պակաս մի ցայտուն որի-
նակ—Ստալինգրադի տրակտորի գործարանը: Դա կա-
ռուցված և ամերիկյան տեխնիկայի վերջին յոսքով:
Դրանում բանվորների առաջավոր կազմերը լի յեն են-
տուղիազմով և ակտիվությամբ ու լարում են իրենց
ամբողջ ուժերը պլանն իրագործելու համար: Ամբողջ
յերկրի յարված ուղադրությամբ հետևում և Ստալին-
գրադի տրակտորի գործարանի աշխատանքներին և
ձեռք և առնում բոլոր միջոցներն այդ հսկայի «ման-
կական հիվանդություն» չըջանն արագորեն վերջացնե-
լու: Յեվ այսուամենյետիվ... գործարանն աշխատանքի
անցնելուց հետո մի ամբողջ տարի պահանջվեց, վոր-
պեսզի նա սկսի, թեկուզ վորոշ ընդհատումներով, մո-
տենալ ծրագրի իրագործման:

Ինչո՞ւմն և բանը: Ինչո՞ւմն են կայանում այսքան
յերկարատև «մանկական հիվանդություն» հիմնական

պատճառները: Ո՞րք ե այն որակը, վորից պետք է բռնել այստեղ: Ամենազլխավորը, վոր խպնդարում եր Ստալինգրադի գործարանի աշխատանքներին, դա աշխատանքների պլանի և հեռանկարների բացակայութունն եր: Գործարանում ամբողջ կոնկրետին որ-որի դրազված եր առաջացած առանձին ճեղքերը վերացնելով, ըստ վորում բոլորը միասին մի ճեղքվածքից նետվում էին դեպի մյուսը, մոռանալով արդյունաբերութեան մյուս խողիրները: Հետևանքը լինում եր այն, վոր դեռ մի ճեղքվածքը չվերացված տասնյակ նորերն էին առաջանում:

Իսկ մտածել այն մասին, թե վաղը կամ մյուս որը վորտեղ կարող են «նեղ» տեղեր առաջանալ և ժամանակին համապատասխան միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կանգ չառնի կոնվեյերը, — ահա հենց սա, ամենազլխավորը գոյութունն չի ունեցել:

Ստալինգրադի տրակտորի գործարանի փորձը բացառիկ պարզութեամբ ցույց տվեց, վոր նոր տեխնիկան պլանային և հեռանկարային ղեկավարութունն ե պահանջում: Նա պահանջում ե կուսակցական աշխատանքների այնպիսի կազմակերպում, վորը կարողանա ապահովել արտադրութեան բոլոր հնարավորութունների անընդհատ և անընդմեջ ոգադրումը, այլ վոչ թե արտադրութեան մասին մի պատահականութունից մյուս պատահականութունը «կարկանդակ» անցնելու: Մի գործարան, ուր զանազան դադդյաճների վրա արտադրվում են 3,5 հազարից ավել առանձին մասեր, ուր զրված են մեր ժամանակի ամենաբարձր դադդյաճները (Սեմյեմատիսի կիսավտոմատ բազմահատերը (МНОГО-РЕЗЦІ ВІЙ)), հելլերի շտամպների համար պատճենահան դադդյաճները և այլն), ուր ամբողջ արտադրութունը վայրկյաններով և հաշվի առնված, հարկավ, չեր կարող լինչ-վոր «կամպանեյչչինայի» պայմաններում նորմալ աշխատանք կատարել, յերբ յուրաքանչյուր որ սխառմատիկարար խախտվում եր աշխատանքի ճրագիրը, յերբ դադդյաճներից հանում էին ծրագրով նախատեսված աշխատանքը, վորպեսզի սկսեն կիսատ մնացած

մասերի արտադրութունը, և դրա հետևանքով ամբողջ ողջ կորցնում էին դադդյաճների վերադասավորման համար, իսկ հետո, յերբ պարզվում եր, վոր դադդյաճների վերադասավորման ժամանակահատվածում սպառվել է արդեն առաջին մասերի ամբողջ պաշարը, ապա նորից են սկսում վերադասավորել դադդյաճները և նորից առաջին մասերն արտադրել:

Անհետանկար աշխատանքը, դրա հետամնացութունը՝ ուր տեխնիկական ուսուցիչ պահանջների կամուսնությունը (կամպանեյչչինա, հասունութուն) — ահա ընչումն ե կայանում գլխավոր չարիքը Ստալինգրադի տրակտորի գործարանում:

Կուզրասի և Ստալինգրադի տրակտորի գործարանի որինակով մենք բացում ենք մեր մի շարք կազմակերպութունների ներկայիս աշխատանքների հիմնական թերութուններից մեկը: Վերակառուցման շրջանի հրահայտական խնդիրներն իրենց հաջող լուծման համար պահանջում են լրիվ դիմադարձ կատարել՝ ապահովելու այդ խնդիրների իրագործումն ու իրականացումը: Յերեք տարում նոր Կուզրաս կառուցել, արագորեն յուրացնել Ստալինգրադի տրակտորի գործարանը, — սրանք հսկայական խնդիրներ են, վորոնք ստույգ պլան, պարզ հեռանկարներ և ճիշտ ուղիներ են պահանջում: Սրանք այնպիսի խնդիրներ են, վորոնք պահանջում են ամբողջ աշխատանքները դեպի իրենց դարձնել լրիվ կերպով: Միայն ընթացիկ որով սպրել և չտեսնել այդ խնդիրների ամբողջ ծավալը, համապատասխանորեն չվերադասավորել ամբողջ աշխատանքները, նշանակում ե քարշ գալ մեծագույն խնդիրների սղջից և հետ մնալ դրանց մակարդակից:

Կուզրասը և Ստալինգրադի գործարանը, իհարկե, բնորոշ որինակներ չեն, այլ ավելի շուտ բացատրութուններ են, սակայն զարգացման հեռանկարների հետ առողջ գործնական անբավարար կապելու տարրեր և վաղվա համար այսորվա աշխատանքների մեջ անբավարար խորացման յերևույթներ նկատելի յեն ամենուրեք, հատկապես ստորին կազմակերպութուններում,

վորոնք լարված են զանազան կամպանիաներով: Այդ պատճառով անհրաժեշտ է ներկա խնդիրը դնել իր ամբողջ ծավալով:

Մեր բերած բոլոր որինակները ցույց են տալիս, թե վորքան սուր է դրված տնտեսական զարգացման պլանի և հեռանկարների հետ կուսաշխատանքները կապելու խնդիրը և թե ավելի հոտալու է ինչպիսի բացասական դեր է կատարում միայն այսօրվա որով ասպրելու հին «աբրովոյան» սովորությունը: Տնտեսության պլանայնությունը հսկայական ծավալման շրջանում չի կարելի կուսակցական աշխատանքների վոչ մի ողակում կանգնած մնալ կամպանիային և հոսունությունը դիրքերում: Այլևս վոչ մի տեղ թույլ չտալ աշխատելու «յարախոտ», մի ճեղքվածքից անցնել մյուսին, մի կամպանիայից անցնել մյուս կամպանիային: Տնտեսական զարգացման պլանը և հեռանկարները պետք է դառնան կուսաշխատանքների ծրագրի բաղան ու հիմքը: Այդ տեսակետից ամենուրեք պետք է վորպես որինակ վերցնել ԿԿ Կազմբյուրոյի 1931 թ. աշխատանքի ծրագիրը, վորը մոբիլիզացիայի յե յենթարկում բոլոր ուժերը 1931 թ. շինարարության վճռական ողակներում: Այդ ծրագրին պետք է հավատարվեն բոլոր կուսակազմակերպությունները, մինչև նրա ստորին ողակները:

Կուսակազմակերպությունները պետք է իմանան տնտեսական զարգացման հեռանկարները, պետք է նախատեսեն, թե աշխատանքի վոր բնագավառներն են վճռական նշված տնտեսական պլանները կատարելու համար, ի՞նչպիսի դժվարություններ և նեղ տեղեր են կանգնած այդ պլանների կատարման ճանապարհին, և դրան համապատասխան պետք է ուղղություն տան իրենց աշխատանքներին: Այդ ժամանակ չեն լինի այնպիսի փաստեր, ինչպես, որինակ Պուտիլովի տրակտորի գործարանում, յերբ մենք մի շարք հաղթանակներից հետո «հանկարծ» դեմ առանք 1-ին յետամոյակի ճեղքվածքին, վորը հետևանք էր նրա, վոր նախատեսված չէին նոր սարքավորումը փոխադրելու և դնելու դժվարությունները, վոր տրակտորների բաժնի տեխնի-

կական վերակառուցման պլանը, դրա հետևանքով, կարված չէր ընթացիկ արտադրության պլանին, և վերակառուցումը կատարվում էր աշխատանքի ընթացքում: Կամ Ստալինգրադի տրակտորի գործարանում, ուր կուսակազմակերպությունները, ավարտելով գործարանի կառուցումը, ժամանակին չկարողացան մոբիլիզացիայի յենթարկել իրենց ուշադրությունը՝ լուծելու այն խնդիրները, վորոնք վորոշում էին գործարանը գործի դնելու և հետագա աշխատանքների հաջողությունը, — այն է՝ գործիքների և վերանորոգման գործի ճիշտ կազմակերպում, առանց վորի դադարահաներն ու մեքենաները չեն կարող նորմալ և անընդհատ աշխատել: արտադրության պարզ կազմակերպում (նրա ճիշտ պլանը, պլանի հաջող կատարման ասպահովումը), վորը չափազանց բարդ խնդիր է Ստալինգրադի գործարանում, ուր մենք ունենք սերիալին և կոնվեյերային արտադրության կոմբինացիա: Նյութերի անընդմեջ մատակարարում, վորը պահանջում է միջոցների մի ամբողջ սիստեմ (լրացուցիչ դադարահաներ՝ մետաղին ճիշտ չափ տալու, մետաղի վորակը պարզելու համար լաբորատորիա, հսկիչ ապարատուրա և այլն): տեխնիկական վորակավորյալ կադրերի պատրաստում (վարպետներ, սարքավորողներ, հրակիչներ), ինչպես նախապատրաստող պրոցեսների, նույնպես և դրա կատարողների: Յե՛նի կամ ԱՄՍ գործարանում, ուր կազմակերպությունները վայրեն կերպով կատարելով արդժինպլանը, միաժամանակ իրենց ուշադրությունից թաց թողին այդ հսկայի վերակառուցումը, բոլորովին չզբաղվեցին շինարարության առուրյա աշխատանքներով, չպատրաստեցին մոնտաժը և այլն:

Անհրաժեշտ է ամենուրեք անխնայաբաշխաբար այդ ամենատես սահմանափակությամբ բոլոր տարրերին: Կուսաշխատանքների ծրագիրը պետք է ընդգրկի աշխատանքների վոր յոր կոնկրետ ճյուղերը, վորոնցից կախված է անտեսելիս կարևորությունը և բախտը: Այդ հարցերը պետք է չափեն կուս-

1007
30054
57134-66



մարմիններում, համապատասխան ձևաարկումների կիրառման համար պետք է մտքիլիդացիայի յենթարկվեն կուսակցական լայն մասսաները, պետք է համապատասխանորեն վերաբաշխվեն կուսուժերը, ընդունելութուններ կատարվեն կուսակցութան մեջ, ղեկավարվեն արհմիությունները, հարվածայնությունը, սոցմրցումը և այլն: Այդ հիմունքով կուսաշխատանքների ծրագիրն ամենուրեք պետք է բարձրացնել այն իրոք բայլչեկյան ղեկավարութան աստիճանի վրա, վորի մասին ասված է ստալինյան հետևյալ հայտնի ձևակերպման մեջ.—

«Վերցնել ղեկը և նայել, վորպեսզի վոչինչ չտեսնել, քանի ղեկ հանդամանները մեր ջիթը չեն խցկել վորեկ աղետի մեջ.— դա ղեկավարել չի նշանակում: Բայլչեկոմ ղեկավարությունն այդպես չի հասկանում: Վորպեսզի ղեկավարել՝ հարկավոր է նախատեսել»:

Այսպիսով տնտեսական զարգացման հեռանկարային պլանը, կուսակազմակերպությունները դրա հետ միասին պետք է գլխավորեն մասսաների ակտիվությունը՝ այսորվա խնդիրների, ինչպես և ընթացիկ շրջանի արդժինայլանների կատարման և ղեկավարման համար: Մենք արդեն խոշոր նվաճումներ ունենք սոցիալիստական շինարարութան տեմպերի համար տարած պայքարում: Բայց այնուամենայնիվ մենք չենք կարողացել 1930 թ. կատարել նշված պլանը մի շարք ճյուղերում (առտիս, մետաղ, տրանսպորտ), չենք կատարել նաև 1931 թ. նախորդ ամիսների ծրագրերը: Այստեղ գլխավոր պատճառն այն է, վոր անհրաժեշտ շրջադարձ չի կատարված Եկպի ներքին մորիլիդացիան, արտադրության ուսցիտնալիդացիան, այդ հիման վրա՝ վորակական ցուցանիշների իրականացումը (ինքնարժեքի իջեցում, արտադրանքի վորակը): Ներկայումս հենց այդ է խիտում թի՛ տեմպերի և թե՛ արդժինայլանների կատարման ընդհանրապես:

Վերակառուցման շրջանի առաջին բոլոր տարիներ-

րում տեղերում բավարար չափով սրված չէին ներքին միջոցների մորիլիդացիայի խնդիրները: Արտադրության ռացիոնալացման փոխարեն տեղերում կուսակցական, արհեստակցական և տնտեսական մարմինները մի շարք դեպքերում ընթացել են այլիլի թույլ դիմադրության գծով,— արդյունարերությունն ընդարձակելով ի հաշիվ բանվորների նորանոր մասսաների հոսեցման: Հաճախ տեղերում ուշադրության չէր առնվում վորակական ցուցանիշների խնդիրը, աչքաթող էր արվում այն, չնայած կենտրոնի հրահանգներին: Ներկայումս անհրաժեշտ է այդ բնագավառում հիմնականապես փոխել դրությունը: Պետք է ներկա մոմենտում ամբողջ ուժով սրել վորակական ցուցանիշների խնդիրը: Դա մշտապես կանգնած է յեղել մեր առաջ: Մակայն ներկայումս նա առանձնապես սուր բնույթ է ստանում: Մեր որերում տեղի ունեցող «յերեսներս ղեպի գյուղ կուսակցության լողունդի լրացումը դյուղացի-կոլտնտեսականների լողունդով — յերեսներս ղեպի քաղաք» (Ստալին) արդեն ներկա մոմենտում իսկ հարց է դնում պլանաչափ ոգտադործել կոլտնտեսությունների ուժերը (կոնտրակտացիա և այլն) սոցիալիստական քաղաքի պահանջների համար: Դրա հետ միասին դոյություն ունի նաև հակառակ տեղեկաց: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը վերացնում է դյուղի աղքատությունը և վորոշ շրջանակների մեջ է դնում «դյուղից ղեպի քաղաք դյուղացու արտադնացը»: Հին ձևերով լուծել արտադրության զարգացման խնդիրը՝ արդեն հնարավոր չէ: Անհրաժեշտ է վերադասավորվել արագ ու վճռական կերպով: Անհրաժեշտ է դնել ներքին միջոցների մորիլիդացիան: Անհրաժեշտ է յերեսով դառնալ ղեպի վորակական ցուցանիշները: Ահա տվյալ մոմենտում արդժինայլանների կատարման և ղեկավարման հիմնական ողակը:

Ո՞ւր է այն գեները, վորը պետք է դարձնի մեզ ղեպի ներքին միջոցների մորիլիդացիայի գործը: Այդ առաջին հերթին տնտեսական հաշվարկի ակցումն է: կուսակազմակերպությունները պետք է հենց այդ հայեցակե-

տով մոտենան տնտեսական հաշվարկին, թույլ չտան, վոր դա կտրվի ներքին միջոցների մոբիլիզացիայի գործից: Այն ժամանակ տնտեսական հաշվարկն իրոք կհանդիսանա արտադրութեան զարգացման պլանի կարևորագույն տարրը և բաղադրիչ մասը, վորով և, ինչպես ասացինք, եյականապես տարբերվում է սովյալ ետապի տնտեսական հաշվարկը: Այստեղից պահանջներն համապատասխան տնտեսական հաշվարկի, կալիուլյացիայի և բալանսի խնդիրները պետք է յերակետ հանդիսանան ձեռնարկութեանը կուսաշխատանքների ծավալման համար: Տնտեսական հաշվարկի, կալիուլյացիայի և բալանսի ցուցանիշներով կուսակցական մարմինները պետք է չափեն տնտեսական խնդիրների կատարման ընթացքը և համապատասխան կարգով մոբիլիզացիայի յենթարկեն ու վերաբաշխեն ուժերը և միջոցները: Կուսակազմակերպութեանը պետք է սովորեն թվերի չոր սյունյակների հետևում տեսնել ընթացիկ կյանքը՝ նրա ամբողջ բազմազանութեամբ և այդ թվերի վերլուծման հիման վրա վորոշեն յուրաքանչյուր որվա ծրագիրը:

Անհրաժեշտ է միանգամայն պարզորեն նշել, վոր տեղերում կուսակազմակերպութեանը դեռ չեն հասնում իրենց ուժերը վճռականապես յերևոները դեպի տնտեսական հաշվարկի դարձնելու համար: Նրանք մի շարք դեպքերում մի կողմ են բաշխում այդ գործից, թերադնահատում են տնտեսական հաշվարկի հսկայական դերը սովյալ ետապում, յերբեմն դրան նայում են գուտ գործածողորեն, վորպես ինչ-վոր «առևտրական» ձեռնարկում: Այդ է պատճառը, վոր այդքան շատ դժվարութեաններ են լինում տնտեսական հաշվարկին անցնելու գործում:

Ահա, որինակ, Մոսկվայի «Դինամո» գործարանը: Հիմնական բաժինները (ձուլարան, մեքենայական) արդեն 1931 թ. մարտից անցել են տնտեսական հաշվարկի: Բայց թե ինչ արժեք ունի այդ անցումը՝ դա յերևում է նրանից, վոր բաժինները մինչև որս չունեն իրենց արտադրանքի և մասերի կալիուլյացիան, չգիտեն իրենց միջոցների մասին: Այս բոլոր հարցերը վերիպել են կուս-

կազմակերպութեանների ուշադրութեանից, վորոնք տնտեսական հաշվարկին վերաբերվել են վորպես «ապարատային ռեֆորմի», տնտեսական հաշվարկին անցնելու կապակցութեամբ չեն վերադասավորել իրենց աշխատանքները և անցման շուրջը մոբիլիզացիայի չեն յենթարկել մասսաներին: Տնտեսական հաշվարկի այդպիսի ձևականորեն անցնելու հետևանքով մենք դեռևս վճռական բեկում չունենք գործարանում: Ձուլարանը խորը ճեղքվածքի մեջ է և խափանում է ամբողջ գործարանի աշխատանքը: Դեռ ավելին: Տնտեսական հաշվարկին անցնելուց հետո ձուլարանի երեկտրավառարանն ապրիլ ամսում անգամ պակասեցրել է իր արտադրութեանը՝ համեմատած փետրվար և մարտ ամիսներին, իսկ խոտանքը յերկու անգամ գերազանցել է նորմայից: Նույնպես վատ են աշխատում թե՛ մեքենայական գործարանը, թե՛ ապարատայինը և այլն: Ձևականորեն անցկացված տնտեսական հաշվարկը վոչ միայն դրական, ամբողջ արտադրութեանն առողջացնող դեր չխաղաց, այլ անգամ ավելորդ արդեյակ է ավելորդ դժվարութեան հանդիսացավ:

Մեկ ուրիշ որինակ՝ Լենինգրադի միքանի ձեռնարկութեաններից: Լենինի անվան գործարանում կուսակազմակերպութեանները բանվորներին վոչ միայն մասնակից չեն արել տնտեսական հաշվարկի անցկացման գործին, այլ նույնիսկ խելացիորեն չեն բացատրել նրանց անցման նշանակութեանը և եյութեանը: Այդ պատճառով էլ շատ բանվորներ չգիտեն, թե ինչ բան է տնտեսական հաշվարկը և ցեխերն ինչու յեն անցնում տնտեսական հաշվարկի: Շատ բնական է, վոր այդ պայմաններում ձեռնարկութեաններում վոչ մի տնտեսական հաշվարկ չի կարող լինել: Յե՛վ իրոք, մոդելների բաժնում, վորը մայիսի մեկից անցել է տնտեսական հաշվարկի, հայտնի չէ, թե բաժինն ինչպիսի աշխատանքներ պիտի կատարի, ինչպիսի մոդելներ պիտի առաջին հերթին պատաստի և այլն: Նույն գրութեանն է տիրում նաև դարձնողում, կաթսաների և մյուս արհեստանոցներում: Կուլակովի անվան գործարանում կուս-

արհմիութենական և տնտեսական մարմինները համարում են, վոր բոլոր ցեխերն արդեն անցել են տնտեսական հաշվարկի, մինչդեռ ցեխերի կողմից վոչ մի պայմանագիր ստորագրված չե և ցեխերում ու բրիգադներում պայաններ չկան: Հետևանքն այն է, վոր պարաստող ցեխերը լրիվ կոմպլեկտով չեն հանձնում կիսաֆարրիկատները, անպատասխանատու վերարերմուներ և ցույց տրվում դեպի թանգարժեք խնդրալային սարքավորումը, գոյություն ունի մեծ քանակությամբ պարապուրդներ և այլն¹⁾:

Յույց տրված որինականներն, իհարկե, ընդհանուր կանոն չեն հանդիսանում: Մենք ունենք մի շարք ձևափոխություններ: Ստորոգյալներն արդեն անցել են տնտեսական հաշվարկի, սրինակ՝ Ելնկտորգործարանը, Չերթինսկու անվան գործարանը (Մոսկվա), «Սեվկարեր», Յեդորովի անվան գործարանը (Կենինգրագ) և այլն:

Նրանց աշխատանքների վերլուծումը ցույց է տալիս վոր տնտեսական հաշվարկին հաջող անցնելու հիմնական պայմանը հանդիսանում են հետևյալ չորս մասնատները:—

1. Կուսկազմակերպությունները պետք է յերեսով դառնան և ևս մտադրական օրոգանքներ և ինքնուշտոտության կենտրոնը դարձնեն ինքնարժեքի կալկուլյացիան, վորակի չափանիշների վերլուծումը: Պետք է ստորել այդ հարցերին նվիրելու վոչ պակաս ուշադրություն, քան տեխնիկայի խնդրին: Պետք է պարզենք մեզ, վոր տվյալ ետապում տեմպն առաջին հերթին կախված է վորակական ցուցանիշների կատարումից և վոր այդ խնդիրներն անխզելիորեն կապված են մեկը մյուսի հետ:

Հարկավոր է արտադրանքի ինքնաօժեքի և վորակի հարցերին մոտենալ կոնկրետ և վոչ թե «ընդհանրապես և ըստ ամբողջության»: Դրանք պետք է ճատությամբ գրանցվեն բոլոր տարրերի և բոլոր ազդեցատների

նկատմամբ: Սենն մի ազդեցատ պետք է ունենա իր առանձին մեքենաների և առանձին մասերի սզտագործման ճիշտ կոնֆիգիենտը: Պետք է միանգամայն ճշտությամբ բաշխվեն վառելյան լույթի, հումուլթի, նյութերի ծախսման բոլոր նորմաները և պետք է բանվորների յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանվի նրանց արտադրողականության կոնֆիգիենտը՝ յուրաքանչյուր ցեխում, յուրաքանչյուր առանձին ազդեցատում: Պետք է համեմել նրան, վոր յուրաքանչյուր բանվոր իմանա այն խնդիրները, վորոնք զբվում են իր և իրեն մեքենայի վրա:

Այս բոլոր հարցերը պետք է կուսաշխատանքների բովանդակության կիսնական առանցքի հանդիսանան: Առանց փոխարինելու տնտեսավարներին և ամուր կերպով ապահովելով միաձնու գեկավարության սկզբունքը, նմուս կողմից առանց կնիք խփելու տնտեսական մարմինների վորոշումների վրա և առանց նրանց «հավեւայ մաս» բառնալու, կուսկազմակերպութունները պետք է ընդհուպ մոտենան այն բոլոր կոնկրետ խնդիրներին, վորոնցից կազմվում է ինքնարժեքի կալկուլյացիան, արտադրանքի մոտեն: Առանց որան հարցավոր չեն հաջողությամբ աշխատանքի տնտեսական հաշվարկն, կատարել արդիւնյանը և տիրապետել բաշխելիյան տեմպերին:

2. Կուսաշխատանքների բովանդակության վերակառուցումը սերտորեն կապված է նրա հետ, մոր սուկազմակերպությունները գլխավորեն բանվորների մասաշխական շարժումը՝ ներքին միջոցների մարիլիզացիայի, արվյուսաբերության ուղիներալացման համար: Յեվ բոտոմինս պետք է բազա հանդիսանա կուսաշխատանքների բովանդակության համար այս նոր պայմաններում: Ինչը պետք է ապահովի կուսկազմակերպություններին արտադրության ղեկավարման գործում ղեկարարիաներից, «ընդհանրապես» ղեկավարությունից անցնելու կոնկրետ ղեկավարման: Ինչպես ասված է, անհրաժեշտ է համեմել նրան, վորպետքի կուսկազմակերպություններն սկսեն հավաքել, կենտրոնացնել, ընդ-

1) Տվյալները վերաբերում են 1931 թ. մայիսի սկզբին:

հանրացնել և վերամշակել առաջավոր բանվորների ամբողջ փորձը և այդ հիման վրա իրականացնել իրենց դեկավարութունը: Բանվորական մասսաների փորձի հաշվառումը, — ահա թե ինչը պետք է հանդիսանա հիմքերից մեկը տվյալ ետապում: Իսկ դա պահանջում է, վոր կուսակազմակերպութունները գլխավորին առաջավոր բանվորների մասսայական շարժումը, խնամքով հաշվի առնեն, ուսումնասիրեն և յուրացնեն նրանց յուրաքանչյուր նախաձեռնողական քայլը, նրանց յուրաքանչյուր առաջարկը, ավելի և ավելի ընդարձակեն ու կիրառեն նրանց փորձը և այդ հայեցակետով դեկավարեն տնտեսական և արհմիութենական մարմինները:

Տվյալ մոմենտում այդ բնագավառում զբուխները միանգամայն անբավարար է: Գրեթե մեր բոլոր ձեռնարկութուններում մենք ունենք մասսայական ընդարձակ ռացիոնալացման շարժում: Միջանցիկ հարվածային բրիգադները, հարվածային-ռացիոնալացման խմբակները, օրինակելի արտադրանքների բրիգադները, բանվորական գյուտարարութունը, վերջապես հանդիպական արդֆինսյանները, — այս բոլորը կազմում են ներքին միջոցների մոբիլիզացիայի, արտադրութայն ռացիոնալացման համար բանվորների մասսայական շարժման շղթայի ողակները: Սովորաբար այդ շարժումը գլխավորում են առաջավոր կոմունիստները, վորոնք ռացիոնալացման ճակատում առաջավոր դիրքեր են զբաղում և հաճախ դրա կազմակերպողներն ու առաջապահներն են հանդիսանում: Չնայած դրան, կուսակազմակերպութուններն ամբողջությամբ հաճախ ըստ էություն չեն դեկավարում այդ ամբողջ շարժումը, չեն ուսումնասիրում այդ շարժման փորձը, չեն ընդհանրացնում և չեն տարածում: Կի այդ հայեցակետով հետազոտել է Միության մի շարք ձեռնարկութուններ, ուր ախատանքը դրված է յամ: Յե՛վ պարզվել է, վոր անդամ այնպիսի առաջավոր-ձեռնարկութուններում, ինքուրիսիք են ԱՄՈ գործարանը Մոսկվայում, Կարլ Մարքսի անվան գործարանը Լենինգրադում, Կամենսկու թղթի գործարանը, ուր բանվորների ռացիոնալացման շար-

ժումն արդեն լայն ծավալ է ստացել, ուր բանվորներն ստեղծել և առաջադրել են նոր ձևեր, — անգամ այդ գործարաններում կուսակազմակերպութունները դեռևս չեն գլխավորել այդ շարժումը: Ահա, օրինակ, ԱՄՈ գործարանը:

Հավածային շարժումն զգալիորեն դարգացած լինելով և մի շարք օրինակելի բրիգադների գոյությամբ հանդերձ՝ հաշվառում չեն յենթարկվում բրիգադների աշխատանքների վորակական ցուցանիշները, մի շարք ցեխերում չի գլխավորված պայքարը վորակի հասար. արտադրական խորհրդակցութունները, վորոնք պետք է ռացիոնալացման մասսայական շարժման կենտրոնը հանդիսանան, յերբեմն անցնում են առանց մոտենալու ինքնարժեքի իջեցման և տնտեսական հաշվարկի խնդրներին, բանվորների առաջադիվները թթու յեն դրվում և այլն: Պուտիլովի գործարանում, Կամենսկու Փաբրիկաներում, Տվերի «Պրոլետարկա»-յում կազմակերպութունները կոնկրետ կերպով չեն դադարել այնպիսի խնդիրներով, ինչպիսիք են գոյություն ունեցող սարքավորման լրիվ ոգտագործումը, իմպորտային դադդյահների մաքսիմալ ոգտագործումը, վառելանյութի, մետաղի, հումուլթի խիստ տնտեսում, բանվորների ռացիոնալ ոգտագործում և այլն և այլն: Յե՛վ այդ տեղի յե ունենում չնայած այն հանգամանքին, վոր առաջավոր-բանվորները հենց այդ հարցերն են առաջին տեղը դրել, դրանց նկատմամբ սրել են արտադրական խորհրդակցութունների, հարվածային բրիգադների, գյուտարարական խմբակների ու շարժութունը և այդ հարցերի ամենորյա ուժման համար հարվածային շարժման մի շարք նոր ձևեր են կազմակերպել: Այդ բոլոր դեպքերում կատարյալ պարզությամբ դրսևորվել է այն հանգամանքը, վոր վորոշ ձեղքվածք գոյություն ունի կուսակազմակերպութունների աշխատանքների բովանդակության և առաջավոր բանվորների մասսայական շարժման միջև: Անհրաժեշտ է անմիջապես վերացնել այդ ձեղքվածքը: Գլխավորել և հսկայական թափ ներշնչել մոտսայական ռացիոնալացման շարժ-

մանը՝ ուս հանդիսանում է կուսակազմակերպութեան ներքին մարտական խնդիրը ավյալ ետապում: Սա ամուր գծերի վրա կղնի ներքին միջոցների մոբիլիզացիայի և արտադրութեան ուսցիտնալացման գործը, ինչպես և ամուր հիմքեր կատարողի արտադրական սղանների կատարման և դերակատարման համար:

Թե ինչպիսի բացատրիկ և իրականացնել վճռական նշանակություն ունի այդ սկզբունքով կուսաշխատանքների վերակառուցումը, սա կարելի չէ պարզել այն ձևնորկուսությունների որինակով, վորոնց կուսակազմակերպություններն արդեն նման ձևով վերակառուցել են իրենց աշխատանքները: Այդ տեսակետից բավականին ցայտուն որինակ է տալիս Պուտիլովի արակտորի գործարանը: 1931 թվի առաջին յետամսյակի վորոշ ձեղքվածքից հետո կուսակազմակերպությունն ահազանդ է տալիս: Նրանք կոչում և մոբիլիզացիայի յեն յեն-թարկում բանվորական մասսաներին՝ արչավելու տրվյալ շրջանի գլխավոր դժվարությունը դեմ—չաղկապելու բաժնի տեխնիկական վերակառուցումն ընթացիկ արտադրութեան հետ: Գործարանի կուսակազմակերպությունն այդ աշխատանքների կենտրոնը դարձնում և արտադրական խորհրդակցությունները:

«Արտադրական ծրագրի կատարման վճռական ոգակր հանդիսանում է յին արտադրական խորհրդակցությունները: Պրոլետարական անխնա ինքնաքննադատությունները հարձակվեցին դեպի այդ մոտացված բնազավառը: Զեղքվածքի ժամանակ սեկաններում և բրիգադներում արտադրական խորհրդակցությունները միանդամայն ցամաքել էլին, իսկ ցեխայիններն աշխատում էլին ինքնահասի սկզբունքով կամ բոլորովին յեյլն աշխատում: Միայն դրանով կարելի չէ բացատրել բանվորական առաջարկների քանակի պակասումը: Թույլացավ աշխատանքի դիսցիպլինան, ավելացավ ամերիկական թանգարթեք դաղդյահները կտարելու դեպքերի քանակը:

Վերակազմվում են արտադրական խորհրդակցու-

թյունները, դրանք փոխադրվում են ամենաները, բրիգադները և մոտեցվում են դաղդյահներին: Այդ վերակազմումն անմիջապես աշխուժացնում է նրանց աշխատանքները, դարձնում է նրանց մասսայական և հարվածային:

Արտադրական խորհրդակցությունները դառնում են նոր տեխնիկային տիրապետելու, ուսցիտնալացման շարժման և դյուսարարութեան կենտրոնը:

Գա առանձնապես ակնրախ է իրենց աշխատանքները վերակառուցած արտադրական խորհրդակցությունների կողմից արտասահմանյան նոր սարքավորումները կտարելու դեմ տարվող պայքարով: Ամբողջապես արտասահմանյան դաղդյահներով սարքավորված նոր մեխանիկական արհեստանոցում այս րեք ամսվա ընթացքում կտարելու 22 դեպք և տեղի ունեցել իսկ նոր դարբնոցում՝ 2 դեպք և այլն: Բանվորներն ամենադաժան պայքարը հայտարարեցին մեքենաները փչացնողների դեմ: Կտարելու վոչ մի դեպք չմնաց առանց պատժի, առանց քննելու արտադրական խորհրդակցություններում և բանվորական ժողովներում: Դասակարգային օստտարակութեան առ ձեռ վճռական դեք խաղաց կտարելու դեպքերի տոկոսն իջեցնելու խնդրում: Մարա ամսին կտարելու դեպքերի թիվը փետրվար ամսի համեմատությամբ իջավ կրկնակի չափով:

Թե ինչպես է ծավալվել ուսցիտնալացման շարժումը, դա կարելի չէ տեսնել նրանից, վոր թուշածուշական արհեստանոցը, վորը ամերիկացիների կողմից նախատեսված է 11 հազար տոնն բարդ և հասարակ ձուլվածքը տալու համար կրանոպուտիլովականների կողմից մեծ շրջանում մի շարք ուսցիտնալացման ձևնորկումների կիրառումից հետո, հնդամյակի յերրորդ տարում տալու յե 17 հազ. տ. միայն բարդ ձուլվածք: Հսկայական չափով աճել է բանվորական առաջարկների և դատակրի թիվը, վորոնք արժեւաւոր գանձ են ավելացնում ամերիկական տեխնիկայի մրա (ամերիկական «Լե-Բյոնդ» դաղդյահի արտադրողականութեան կրկնակի ավելացումը, ծակող դաղդյահի լավացումը և

այլն) : Միայն նոր մեքենայական արհեստանոցում հուն-
վար ամսին ներկայացված և 117 դյուտ, փետրվարին՝
187, մարտին՝ 320»¹⁾ :

Այդ տեսակետից Պուտիլովի տրակտորային գործա-
րանք, — «Ամերիկա-Կրասնոպոլսիովկան», — ինչպես
դրան անվանում են բանվորները, վերադրեց ճեռ-
վածքները, կանգնեց հնդամյակի առաջամարտիկների
առաջին գծի վրա և հնարավորութուն ունեցավ բուք-
սիրի վերցնել Ստալինգրադի տրակտորի գործարա-
նին : Ահա սրանք են կուսկազմակերպությունների
չրջադարձի արդյունքները ղեպի բանվորական մասսա-
յի ուղիունադման շարժումը :

3. Կուսկազմակերպությունները պետք է բացա-
ռիկ ուշադրություն դարձնեն արտադրության պլանա-
վորման խնդիրներին : Թե ինչպե՞ս հաճախ ինչ աստի-
ճան անբավարար է դրված ձեռնարկությունների պլա-
նավորումը, կարելի չէ դատել այն թո՞րիչքա՞նք ընթաց-
քից, վորպիսին վորոշ տեղերում ունի մեր արտադրու-
թյունը : Ահա, որինակ, Ելեկտրոգործարանը : Մինչև
անգամ իր նվաճումներով առաջավոր այդ ձեռնարկու-
թյունում արտադրության այնպիսի «կարգ» է սահ-
մանված, վոր ամսի առաջին տասնորյակը հանդիսա-
նում է միայն «չարժում», յերկրորդը — «վաղը», բայց
յերրորդը՝ իսկական «թոխը» : Յեվ իրոք, Ելեքտրո-
գործարանը մարտի առաջին տասնորյակում կատարում
է ծրագրի 12% -ը, յերկրորդում՝ 14% -ը, իսկ յեր-
րորդում՝ ամբողջ 74 տոկոսը : Ապրիլ ամսին նույնպես՝
16,20 և 62 տոկոս : Տրանսպորտային բաժնում տաս-
նորյակների թոխըներն արտահայտվում են ավելի
ցայտուն կերպով. — մարտի առաջին տասնորյակում՝
7 տոկոս, յերրորդում՝ 85 տոկոս, ապրիլի առաջին
տասնորյակում՝ 10 տոկոս, յերրորդում՝ 68 տոկոս և
այլն :

Մի այլ որինակ՝ «Դինամոն» : Այստեղ ավելի կա-
յուն կերպով է կիրառվում ամսի սկզբին հանդատի և

վերջին՝ տենդային վաղքի պրակտիկան : Ամսվա ծրա-
դրերն ըստ տասնորյակների կատարված են հետևյալ
ձևով, — հունվար, առաջին տասնորյակ՝ 2 տոկոս,
յերկրորդ՝ 7 տոկոս, յերրորդ տասնորյակ՝ 2 տոկոս,
փետրվար, առաջին տասնորյակ՝ 4 տոկոս, յերկրորդ՝
10 տոկոս, յերրորդ՝ մնացածը : Նույնպիսի դրու՞թյուն
է տիրում նաև «Մուրճ և Մանդալ», Մոսկվայի Էլեկ-
տրական, Լեպսեյի անվան գործարաններում և այլն :

Առաջավոր բանվորները գնահատում են պլանի,
«Հայկառման և կոնտրոլի» հսկայական նշանակու-
թյունը ներկա շրջանում : Ձեռնարկություններում մենք
ունենք պլանին տիրապետելու մասսայական շարժում,
այն է՝ հանդիպական արդիւնյան, պլանա-նպերա-
տիվային խմբակներ : Բայց ի՞նչպես հաճախակի կուս-
կազմակերպությունները դեռևս չեն գլխավորում մաս-
սանների այդ մեծագույն շարժումը : Վորպես՝ որինակ
վերցնենք պլանա-նպերատիվային խմբակները : Մինչև
որս այդ խմբակները մեծ մասամբ իրենց կազմով բաղ-
կացած են յերիտասարդներից : Կուսկազմակերպու-
թյունները և կոմյերիտիությունը դեռևս աշխատանք-
ներ չեն ծավալել այդ խմբակները համարանվորական
դարձնելու համար : Արդյունաբերության մի շարք կա-
րևոր ճյուղերում (տրանսպորտ, ածուխ և այլն) պլա-
նա-նպերատիվային խմբակների կազմակերպումը դեռևս
սաղմային վիճակում է գտնվում : Համարյա վոչ մի տեղ
լրջորեն դրված չէ բանվոր-պլանավիկների վորակի
բարձրացման, ինժեներների և անտեսադետների կող-
մից նրանց ողնություն ցույց տալու խնդիրը :

Յեվ այդ պատճառով էլ մինչև որս մենք որինակե-
լի կերպով դրված արտադրական պլանավորման շա-
քիչ որինակներ ունենք : Անհրաժեշտ է ամենայն վրճ-
ուսականությամբ վերջ տալ այդ դրու՞թյան : Անհրաժեշտ
է պլանի և հաջմաման խնդիրները վերցնել կուսկազ-
մակերպությունների արթուն ուշադրության տակ, և
նրանց ղեկավարությամբ նաև պլանավորման գործում
ներգրավել առաջավոր բանվորների ամենայն մաս-
սաններին : Պետք է այդ տեսակետից ընթանալ Մոսկվա

1) Բանվորական բրիգադայի ավանդերով :

յի արգելակների գործարանի որինակով, ուր կուս-
կազմակերպութեանները կարողացել են կազմակերպել
մի շարք պլանայն-ուպերատիվ խմբակներ, վորոնք ճիշտ
պլանավորման գործում բանվորներին մասսայականորեն
ներգրավելու միջոցն են դարձել: Չափազանց ցուցա-
դրական են Արգելակների գործարանի բանվորների կող-
մից մյուս ձեռնարկութեանները բանվորներին ուղղված
հետևյալ գիմումը.

«Մենք չա՞տ դիտենք արդյոք գործարանի ներքին
պլանավորման մասին: Ձեռնարկութեան հասարակա-
կան կազմակերպութեանները բավարար ուշադրութեան
դարձնու՞մ են արդյոք պլանային աշխատանքներին:
Բանվորական լայն մասսաները ներգրավվա՞ծ են արդ-
յոք գործարանի ներքին պլանավորման գործին: Պետք
է ուղղակի ասել, վոր ներկայումս ձեռնարկութեանների
մեծ մասում այդ բանը չկա»: Այսպես են դնում հարցը
Արգելակների գործարանի բանվոր-պլանավորիչները և
հայտարարում են.— «Մեզ առաջադրված մեծագույն
խնդիրն էր պահանջում են հատուկ պարտութեան մրտ-
ցնել գործարանի պլանավորման մեջ: Մենք գտնում
ենք վոր օանտարանի մասսաների մասնակցութեանը
գործարանի ներքին պլանավորման խնդրում՝ դա մի
զորեղ միջոց է, վորը թույլ չի տա վոչ մի փնասարա-
բանան հնարավորութեան, ինչպես և թույլ չի տա ցե-
խերի միջև դիպրոպոսիտ առաջանալու: Բանվորա-
կան մասսաների մասնակցութեանը գործարանի ներքին
պլանավորման, — դա իսկական տնտեսական, հայտարկ
անցկացնելու, ձեռնարկութեան արտադրական իսկական
հնարավորութեան յերևան հանելու հիմնական միջոցնե-
րի մեկն է հանրապետում. դա հանրայական արգիին-
պլանը դարձնում է վոչ թե քացաութեան, այլ ըն-
դունված եանոն յուրաքանչյուր ցեխի, յուրաքանչյուր
գործարանի աշխատանքների մեջ»:

Արգելակների գործարանի բանվորները հետևյալ
լրդունոն են առաժառու՞մ.— «Յուրաքանչյուր բանվոր,
յուրաքանչյուր ինժեներատեխնիկական աշխատակից
պետք է մասնակցի պլանավորմանը»:

Մոսկվայի արգելակների գործարանի բանվորների
նախաձեռնութեանը պետք է իրացվի ամենուրեք:
Պետք է մասսաներին կազմակերպել պլանային ճակա-
տում և այդ հիման վրա մեր ձեռնարկութեաններից ար-
մատախիլ անել անպլանայնութեան և թափթփվածու-
թեան բոլոր տարրերը: Առանց դրան հնարավոր չի տրն-
տեսական հաշվարկի կերտումը և ներքին միջոցների
լրիվ մորելիցացիան:

4. Պետք է հետադա քայլ կատարել աշխատանքնե-
րի ծանրալքյան կենսարմն ստորին ողակը փոխադրե-
լու գործում, վերածելով դրան քաղաքական և տնտե-
սական ձևավորված որդանիզմի: Հարվածային շարժ-
ման հիմքն ստորին բրիգադան է: Ստորին բրիգադայի
աշխատանքի վրա յե հենվում արտադրական պլանավո-
րումը (պլանը մինչև բրիգադա և առանձին բանվո-
րին հասցնելը): Այստեղ է վճռվում տնտեսական հաշ-
վարկի, ներքին միջոցների մորելիցացիայի և արգիին-
պլանի կատարման հաշտութեանը: Պետք է համար
պայքար տանել տեղերում նկատված բրիգադների
քայլայման, նրանց մշտական վերակազման դեմ և
այլն: Անհրաժեշտ է կուսակցական-արհմիութենական
և տնտեսական դժով ընտրել բրիգադների կայուն,
փորձված և հաստատակամ ղեկավարներ: Պետք է
համարձակ կերպով ծավալել կուսակցական և արհ-
միութենական ողակային բջիջների կազմակերպումը:
Պետք է զլխավորել և լայնորեն ծավալել բրիգադը տրն-
տեսական հաշվարկի ացնելու համար առաջավոր բան-
վորների այդ շարժումը:

Կարելի չէ տասնյակ և հարյուրավոր որինակներ
բերել այդպիսի ամրակազմ բրիգադների մասին: Ահա
որինակ Լենինգրադի «Մեփկարելը», վոր հնդամյակը
կատարել է 2½ տարում: Այստեղ հսկայական աշխա-
տանքներ են կատարված յեղել ստորին բրիգադների
համար քաղաքականապես և տեխնիկապես վորակա-
վորյալ կորիզ ընտրելու, նրանցում կուս. և արհմիութ-
նական աշխատանքներն ամրապնդելու, արտադրա-
կան ծրագիրը մինչև բրիգադ հասցնելու խնդրում և

այն: Այդ հիման վրա ծավալվել է բրիգադները տնտեսական համալսարանի անցնելու մասսայական շարժումը: Այդ գործում պրոնեբրներ հանդիսացան 78 բրիգադներ: Նրանք ունեն կայուն ամսական արդֆինսյալաններ, ուր ցույց է տրված, թե բրիգադն ամսվա ընթացքում վորքան պետք է արտադրի, դրա համար ի՞նչ նյութեր են հատկացվում, ի՞նչ գներով և բանվորն ի՞նչ գումարի արտադրանք պիտի տա մեկ որվա ընթացքում: Յուրաքանչյուր բրիգադ հաշվի յե առնում նյութերի և կիսաֆարրիկատների համար ծախսված գումարը, ամեն որ հետևում է ինքնարժեքի կալկուլյացիային և այլն: Բրիգադներն իրար մեջ և իրենց ներսում ծավալում են սոցմրցումը՝ իրենց առաջադրված կոնկրետ խնդիրների կատարման համար, վորտեղ կոմունիստները և կոմյուրիստականներն առաջապահ դեր են կատարում: Այսպիսով, ամեն մի բրիգադ հանդիսանում է քաղաքական և տնտեսական մի ամուր ամբողջություն, արտադրական և մասսայական սմբողջ աշխատանքների իսկական հիմք, տնտեսական հաշվարկի և արդֆինսյալանների կատարման բազա:

Նույնպիսի աշխատանքներ են ծավալվում նաև «Սվետլանում», «Կրասնայա Չարյայում» և հնդամյակը 2½ տարում կատարելու համար պարզկատրված այլ ձեռնարկություններում: Անհրաժեշտ է հավասարվել նրանց, ընդորինակել նրանց փորձը, իհարկի, այդ տեսակետից թույլ չտալով վորևե խտտորում (միանգամայն, առանց անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների բրիգադներին փոխանցել տնտեսական հաշվարկի և այլն): Անհրաժեշտ է ձգտել այդ ճանապարհին իրականացնելու սոցմրցման յերրորդ տարում ՀԱՄԿԻ-ի առաջադրած հետևյալ խնդիրը.— «Սոցմրցման յերրորդ տարում յուրաքանչյուր հարվածային բրիգադ պետք է դառնա տեխնիկայի բրիգադ, ոսցիտնալացման բրիգադ, վորակի բրիգադ»:

Անցնենք ամփոփման: Մեր ապրած ներկա չրջանը պահանջում է հսկայական չափով բարձրացնել կուսաշխատանքների պլանայնությունը: Յեթե վերջին տարիներում կուսաշխատանքներն ամենուրեք յերեսով

վարձել են դեպի ընթացիկ արտադրություն, դեպի հենց այսօրվա հիմնական և հանգուցային խնդիրները, ապա ներկայումս պահանջվում է նոր քայլ կատարել այդ ուղղությամբ: Կուսկազմակերպություններն այլևս չպետք է սահմանափակվեն միայն արտադրության ընթացիկ խնդիրներով: Նրանք պետք է ապահովեն զարգացման ետևակարգների կատարումն հանգուցյանը: Տնտեսական զարգացման հեռանկարը և կուսաշխատանքների ծրագիրը պետք է սերտորեն կապված լինեն մեկը մյուսի հետ:

Իսկ ընթացիկ աշխատանքներում կուսկազմակերպությունները պետք է իրենց աշխատանքները վերակազմեն ձեռնարկությունները տնտեսական հաշվարկի փոխանցելու լիմաստով: Մենք ըննությունն առանք այն մոմենտները, վորոնցից գոյանալու յե այդ վերակազմումը, այն է՝ կուսաշխատանքների բովանդակությունը, և յայն բարձր մակարդակ (չրջադարձ դեպի վորակական ցուցանիշները), բանվորների մասսայական ոսցիտնալացման շարժման գլխավորում, չրջադարձ դեպի արտադրական պլանավորման խնդիրները և ստորին ողակների հետագա ամբացումը: Այս բոլորը կազմում են մի ամբողջության զանազան մասերը, — պլանների կատարման և դերակատարման համար մորիլիկացիայի յենթարկել բոլոր ուժերը և միջոցները, այն բոլոր հրակայական հնարավորությունները, վորը տալիս է մեր տնտեսությունն սոցիալիստական սիստեմը:

Տվյալ ետապում տնտեսական հաշվարկը հանդիսանում է արտադրական պլանի հիմնական տարրը և նրա քաղաղրիչ մասը: Իս ապահովում է պլանի կատարումը: Այդ ճանապարհին նա սերտորեն չաղկավում է հեռանկարային պլանին, դառնում է այսօր այն բոլորի իրականացման լծակը, վորոնք հանդիսանում են հեռանկարային պլանների հսկայական նախատեսումների, պատմական հնգամյակի կենսազորման բազան:

Այսպիսով ստացվում է լրիվ միանություն կուսաշխատանքների վերակազմման մեջ: Կուսաշխատանքների չաղկավումը տնտեսական զարգացման հեռանկարների

4 հետ, ընթացիկ ամբողջ աշխատանքներում դեպի տնտեսական հաշվարկ շրջադարձ կատարելը, տնտեսական հաշվարկն այսօրվա ծրագրեր կատարման գործիքի և հեռանկարային պլանի իրագործման բաղաձյուղ վերածելը, ահա և այժալ հետապի կուրաշխատանքների հիմնական մոմենտներն են և նոր «բեկեռներին» մեկը:

Տ Ե Ն Ն Ի Կ Ա

Մենք ասորում ենք արտադրութան ծավալուն սոցիալիստական վերակառուցման շրջան: Իրականացվում է Լենինի կողմից հանձարեղ կերպով նախագծված խրնդելը, վորով մենք պետք է տեխնիկա-տնտեսական տեսակետից հասնենք և անցնենք կապիտալիստական աշխարհից: Պրոլետարիատը թեև և՛ լինել է «աշխատանքի նոր կազմակերպման ուղին... վորը գլխության և կապիտալիստական տեխնիկայի վերջին խոսքը միացնում է սոցիալիստական խոշոր արտադրութուն ստեղծող գիտակից աշխատավորների մասսայական միության հետ»¹⁾:

Ամենից առաջ առաջադրենք հետևյալ հարցը, — թե պրոլետարիատն ի՞նչպես է կենսադործում և սպասողինում իրեն «գլխության և կապիտալիստական տեխնիկայի վերջին խոսքով»: Պրոլետարիատը կառուցում է նոր, տեխնիկապես կատարելագործված ձեռնարկութուններ, հսկայական չափով ծավալելով այդ աշխատանքները: 1931 թ. ոկդրին սոցիալիստական կառուցումների արժեքը համարյա մեկ ու կես անգամ գերակազուտ էր գոյութուն ունեցող ամբողջ արդյունաբերության հիմնական զբաղակալին: Պրոլետարիատն ավելի է ավելի խիստ կերպով է դնում արդյունաբերության սոցիալիստական ռացիոնալացման, ներքին ամբողջ արտադրական ռեսուրսների մոբիլիզացիայի խնդիրները՝ վորպես առաջնակարգ և կաենորադույն պրոբլեմներ:

Յուրացնելով «կապիտալիստական տեխնիկայի վեր-

¹⁾ Լենին, հատ. XVI, էջ 251:

ջին խոսքը», պրոլետարիատն ամենևին մեխանիկորեն չի փոխադրում նրա ձևերը: Վոչ, նա այդ ձևերն արմատավորում է այլ — սոցիալիստական — հողի մեջ, զգալիորեն կերպարանափոխում է այն և այդ հիման վրա իր վորակապես այլ տեխնիկական բազան է ստեղծում:

Մեր ժամանակի փառջ կապիտալիզմը, չնայած իր ամբողջ տեխնիկական առաջադիմության, հետադիմական և արգելող դեր է կատարում արտադրողական ուժերի զարգացման գործում: Մի ձեռքով հսկայական չափով առաջ մղելով տեխնիկայի նվաճումները, նա ստիպված է միևնույն ժամանակ, ներքին հակասութուններով ջլատված լինելու հետևանքով, կանխել տնտեսական զարգացումը, «ներան ընթացք չտալ» և արդեքներ դնել նրա ճանապարհին: Կապիտալիզմը չի կարող լուծել մեր ողբերի հիմնական տեխնիկական խրնդիրները — սյանային ելեկտրիֆիկացիայի խնդիրները (մի կամ մի քանի յերկրներ մասշտաբով): Նա չի կարող թույլ մասնավոր-տնտեսական հարաբերություններ վրայից, վորոնք կանգնած են այդ խնդրի շուրջի շուրջ վերջին ժամանակների բարձրագույն մեծագույն գյուտերը (աճուխի հիդրոհենիդացիան, փայտի բնախորշից չաքար ստանալու Բերդիուսի մեթոդները և այլն), վորոնք սրահանջում են տեխնիկական վերակառուցման յենթարկել կապիտալիստական արդյունաբերության մի շարք բնագավառները: Կապիտալիզմը վորոչ տեղեւում «հետ-հետ է դնում» իր ձեռնարկութունների ռացիոնալացման գործում: Նա, առանձնապես տնտեսական ճղնաժամերի հարվածների տակ, ստիպված է յերբեմն կրճատել մասսայական, սերիական արտադրութունը, նորից անցնել հին դժբերի վրա և այլն, և այլն: Իր ամբողջ սրությամբ ներկայումս բարձրանում է յենինյան այն դրություն, վոր «կապիտալիզմի տեխնիկան ավելի է ավելի յե վերածվում այն հասարակական պայմաններին, վորոնք աշխատավորությանը գուտապարտում են վարձու ստրկության»¹⁾:

¹⁾ Լենին, Տեխնիկայի մեծագույն հաթանակներն մեկը, 4 մայիսի, 1913 թ. հատ. XVI, էջ 359:

Հաղթական պրոլետարիատը տեխնիկան ազատում է այդ բոլոր կապանքներից և այլանդազմներից: Մոցիալիստական հողի վրա տեխնիկան առաջին անգամ հնարավորութիւն է ստանում վերացնել այն բոլոր արդէրքները, վորոնք կապված են արտադրութեան անարխիայի, մրցման դաժան պայքարի, սեփականատիրական հարաբերութիւնների հետ, և այդ հիման վրա հսկայական չափով արագացնել իր զարգացումը: Համարձակ կերպով առաջադրվում և լուծվում են այն տեխնիկական խնդիրները, վորոնք անմատչելի յեն կապիտալիստական աշխարհին, այն է՝ ամբողջ Միութեան կատարյալ էլեկտրիֆիկացիան, արդյունաբերական հսկայական համակենտրոնացումը, հսկայական կոմբինատների կազմակերպումը (Գնեսլոստրոյը, Ուրալ-Կոզնեցկին և այլն), կապիտալների մոբիլիզացիայի գործում ժամանակի պրոլեմները (տեմպ) և այլն և այլն: Պրոլետարիատն աշխատեցնում է յուրացնում կապիտալիստական տեխնիկան: Նա այդ տեխնիկան մարտում է յատ իրեն, այլ բնույթ տարով դրան: Դեռևս գիտաչեռոբն հետ մնալով կապիտալիստական յերկրների տեխնիկական զարգացման մակարդակից, համենյով նրանց տեխնիկա-տնտեսական տեսակետից, պրոլետարիատը մի շարք բնագավառներում արդեն իսկ վորակապես անցել է առաջավոր կապիտալիստական յերկրներից: Դրանում է կայանում մեր զարգացման առանձնահատկութիւնը, — մեկ է Խաւնում և անցնում եմք:

Մեր զարգացման այդ յուրի տակ միանգամայն հասկանալի յե յինում, թե ինչո՞ւ կապիտալիստական աշխարհի համեմատութեամբ տեխնիկայուս դեռևս հետամնաց Միութիւնում, մի շարք ձեռնարկութիւններում արդեն հիմնական դրամագլխի ոգտագործումն արվելի բարձր է, քան Արևմուտքում և Մամերիկայում, ինչպես և դրա հետևանքով ավելի բարձր է մեր շատ էլեկտրոկայանների տեխնիկական ազրեզատներն ոգտակար գործողութեան կոնֆիցիենսը:

Որքհրային Միութեան տեխնիկական զարգացումը քաղաքական իտրը բովանդակութեամբ յի մի պրոցես է: Այստեղ է գտնվում յերկրում կապիտալիզմի մնա-

ցորդների դեմ վերջին և վճուական պայքար մղելու հիմնական բնագավառներից մեկը: Այդ գծով են մնասարայները դաժան և կատաղի հարձակում կատարել մեր դեմ. — էլեկտրիֆիկացիայի պլանի կատարումը տապալելու յիորձը, արտադրութեան համակենտրոնացման դեմ տարված պայքարը, մանր ու միջին ձեռնարկութիւնների ծախարման ձգտումը և զարգացման տեմպերի դեմ տարված պայքարը: Մյուս բեւեռում պրոլետարիատի առաջավոր տարբերի ամենալայն խափերը պայքարի մեջ են մտնում տեխնիկայի համար և մարտական սյունյակներ են կազմում տեխնիկական ձախտում: Տնտեսութեան բոլոր ճշուղերում մենք ներկայումս ունենք յայն մասսայական ուսցիտնալացման շարժում, բացառիկ հարուստ գյուտարարութիւն և բուն պայքար նոր տեխնիկային տիրապետելու համար: Այստեղ տեխնիկական վերակառուցման պայքարի յեն յեղնում այնպիսի ուժեր, վորոնց մասին կապիտալիզմը յերազել անգամ չի կարող: Կապիտալիզմը չեր կարող տեխնիկայի խնդիրները դուրս հանել իր տեխնիկական ինտելիգենցիայի նեղ շրջանակներից: Մենք այդ գործում մոբիլիզացիայի յենք յենթարկում պրոլետարիատի հարյուր-հաղարավոր և միլիոնավոր առաջապահների փորձը: Յեվ հենց դրանում է կայանում մեր տեխնիկական զարգացման հսկայական արագութեան իսկական գրավականը:

Բանվորների մասսայական ուսցիտնալացման շարժումն ուղեկցվում է Միութեան բանվոր դասակարգի դեմքի, «Կերպարանքի» փոփոխումով: Մեզ մոտ, մեր աչքերի տակ առում է իր ամբողջ ձեռնարկութեան պլանն ստեղծող, ուսցիտնալացման բարդ պրոցեսներին ակտիւորեն մասնակցող և տեխնիկական գյուտարար բանվորի տիպը, — սոցիալիստական բանվորի տիպը, վորը սպառազինված է տեխնիկայով և հանդիսանում է իր ձեռնարկութեան տերը: Տեղի յե ունենում կապիտալիստական ուսցիտնալացումն ուղեկցող պրոցեսի հակառակը: Այստեղ վորակի տեսակետից բանվորական մասսաները հավասարվում են: Վորակավորյալ բանվորն ավելի է ավելի յե փոխարինվում մեքենայական,

ինքնաշարժ և անվորակ բանվորով: Բանվորը «սղմվում» է կոնվեյերացումով, ձգտում է ստեղծվում ղեպի դիմադուրի բանվորը, այն բանվորը, վորն ինքնաշարժ կերպով միևնույն գործողութունն է կատարում: Յերկու հակադիր գործողություններ, վորոնցում իր ամբողջ խորթությամբ արտահայտվում է տնտեսութան սոցիալիստական և կապիտալիստական սխառմաների միջև յեղած տարբերությունը:

Տվյալ մոմենտում բացառիկ սրությամբ առաջագրվում է մեզ դեպի տեխնիկան չրջադարձ կատարելու խնդիրը: Գյուղի սոցիալիստական վերակառուցման հետևանքով գյուղացու կողմից դեպի քաղաք զնալու պրոցեսի մեջ առաջացած խոչոր փոփոխություններն ստիպում են մեզ ամբողջ ուժով դարկ տալ արտադրութայն ռացիոնալացման, դրա ամենաարագ մեքենայացման և վերակառուցման: Տեխնիկական վերակառուցումն սկսում է ընդգրկել արտադրութայն բոլոր ճյուղերը, դա որակարգի խնդիր է դառնում շինարարութայն ամբողջ ճակատում: Տեխնիկան դառնում է ինդուստրացման թափը վորոշող հիմնական ողակը: «Մեզ քիչ բան է մնում, — ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել դիտութայն: Յեվ յերբ մենք կատարենք այդ, ապա մենք այնպիսի տեմպեր — կունենանք, վորոնց մասին ներկայումս չենք համարձակվի մտածել անգամ» (Ստալին):

Այդ տեսակետից մոտենանք ձեռնարկութունների կուսաշխատանքներին տվյալ չրջանում:

Կուսակազմակերպութունները պետք է գլխավորեն և կազմակերպեն առաջավոր բանվորների պայքարը տեխնիկական ճակատում: Առաջին հերթին դրանում պետք է կատնու նրանց չրժողարձը դեպի տեխնիկան: Ընկ. Ստալինի յողունը՝ «Յերեսով դեպի տեխնիկան», չպետք է հասկանալ հասարակ ձևով, տեխնիկական ուսուցման անհրաժեշտութայն տեսակետից միայն: Տեխնիկական ուսուցումը պետք է ծավալվի հսկայական չափով, մինչև բանվորների և ղեկավար կադրերի ընդհանուր տեխնիկական ուսուցումը: Սակայն դրանով չպետք է սահմանափակել չրջադարձը դեպի տեխ-

նիկան: Տեխնիկան՝ դա դասակարգային պայքարի ձեռնարկ է, դա «վերակառուցման չրջանում վորոշում է տմեն ինչ», և մոտեցումը դեպի տեխնիկան պետք է լինի քաղաքական, այլ վոր թե նեղ մանկավարժական:

Կուսակազմակերպութունները պետք է իրենց ուղարկութայն կենտրոնը դարձնեն դեպի այն տեխնիկական խնդիրները, վորոնք վճռական դեր են խաղում տվյալ ձեռնարկութունում, նրա ընթացիկ կյանքում և նրա հեռանկարային դարգացման խնդրում: Այդ տեսակետով նրանք պետք է վերադասավորեն իրենց աշխատանքների բովանդակութունը, տնտեսական մարմինների, արհմիութունների և սոցմբրգման ու հարվածայնութայն ղեկավարումը, կադրերի ընտրումը և դաստիարակումը, ուժերի բաշխումը և կրթական աշխատանքները: Այն ժամանակ կապահովվի նրանց ղեկավար դերը տեխնիկական ճակատում, ինչպես և հնարավոր կլինի հսկայական չափով դարգացնել ու ծավալել առաջավոր բանվորների մասսայական շարժումը:

Վերջենք յերկու բացառիկ ցայտուն որինակներ՝ նավթը և անուխը:

Նավթն ամենից առաջ կատարեց հնդամյակը: Այդ բացառիկ հաջողութունը բացատրվում է նրանով, վոր կուսակցական, արհմիութենական և տնտեսական մարմինները ժամանակին գրեցին լավագույն ամերիկյան ձևով նավթային արդյունաբերութայն մեքենայացման և ռացիոնալացման խնդիրը: Բազմի և Գրոդնու կուսակազմակերպութունները տիրապետեցին նավթի տեխնիկային, դիմադարձ յեղան դեպի նավթային տնտեսութայն հիմնական խնդիրները, նավթի սոցիալիստական մեքենայացման և ռացիոնալացման գործին ներգրավեցին բանվորների ամենալայն մասսաներին և այդ հիման վրա ունեցան այնպիսի հաջողութուններ, վորոնցով մենք կարող ենք պարծենալ ամբողջ աշխարհի առջև:

Ինչո՞ւմ են կայանում կուս. — արհմիութենական և տնտեսական մարմինների աշխատանքները նավթահանքերում: Նավթի շահագործման կատարելագործված ձևվերը (էլեկտրականացման յենթարկված նավթահան

գործիքներին անցնելը, կոմպրեսորային շահագործումը և գազալիֆտները), հարվածային փորելու վերացումը և ամերիկյան ձևով փորելու ծավալումը, իսկ հետո տուրքինային ձևը, նախվի վերամշակման բնագավառում կրեկինդ-պրոցեսի արմատացումը և այլն, — ահա թե ինչ ուղղությամբ են մորելիլպացիայի յենթարկվել Բագվի և Գրոզնու կուսկազմակերպությունները: Յեվ յերբ կուս-արհմիութենական և տնտեսական մարմինների ղեկավարությունում արդեն իրագործմանը հաղարավոր կոմունիստներ և տասնյակ հաղարավոր բանվորներ լծվեցին, — արդեն զբաղված եր նավթատնտեսության ամբողջ, չնայած վնասարարների կատարի ղեմադրության, վորոնք, ինչպես հայտնի յե, իրենց հիմնական հարվածներից մեկը կենտրոնացրել էին նավթի ձակատում:

Իսկ այժմ վերցնենք ածուխը: Կուսակցությունը հսկայական ջանքեր է գործադրում ամխային տնտեսությունը մեքենայացման յենթարկելու համար: Առաջավոր բանվորները հերոսաբար պայքարում են ամբի ձակատում, մի շարք հանքերում կատարելով և գերակատարելով պլանը: Բանվորների և ինժեներատեխնիկական պերսոնալի իսկական մասսայական ստեղծագործություն պրոցեսում դարբնվում են ամխի տեխնիկական հեղափոխության ուղիները: Մինչև վերջերս այն համոզմունքն էր տիրում, վոր հնարավոր չէ ամխային կոմիւնիստի կերտումը, վորովհետև մենք այստեղ ունենք աշխատավայրի և հանքերի տարածություն մշտական փոփոխում (փոխադրման ճանապարհների յերկարությունը): Կարտաչեվի և Կասաուրովի մեթոդները, լրացված Լիրխարդտի և ապա մի շարք ինժեներների և բանվորների կողմից, միանգամայն վոչնչացնում են այդ պահպանողականությունը և մեր ձեռքը տալիս Գոնբասի ամենաարագ բարձրացման բանալին: Յեթե ներկայումս Գոնբասում քանդող մեքենաները մի քանի տնդամ ավելի քիչ ածուխ են տալիս, քան Ամերիկայում, ապա կիրտուելով Կարտաչեվի և Կասաուրովի մեթոդները, մենք քանդող մեքենաների ոգտագործման տեսա-

կետից միանգամից կկանգնենք կապիտալիզմի առաջավոր յերկրների մակարդակի վրա:

Յեվ, չնայած այդ բոլորին, ահա արդեն մի ամբողջ կիսամյակ է, վոր Գոնբասը մեծ հետամտացություն է ընթանում: Ի՞նչն է դրա պատճառը: Գլխավորն այն է, վոր ամխային տնտեսության տեխնիկական ձակատումը բացակայում էր իսկական ղեկավարությունը: Կուսկազմակերպություններն ըստ էություն կտրված էլին և աչքաթող էլին անում ամխային տնտեսության տեխնիկական ղեկավարության կենտրոնական խողիքները: Մեքենայացումն անց էր կացվում առանց համապատասխան կադրեր պատրաստելու, առանց բավարար չափով կազմակերպելու տեխնիկական նախապատրաստումը և առանց նյութական-տեխնիկական բավարար մատակարարման: Ամխի արտադրություն դանդան պրոցեսների մեքենայացումն ընթանում էր անհավասարաչափ: Որինակ, հատուկ յեռամսյակում մեքենայացված արտադրությունը կազմում էր ընդհանուր արտադրության 63,2%-ը, մեքենայացված փոխադրությունն ընդամենը — 5,9%-ը, իսկ մեքենայացված գրուեի բարձումը — 2,3%-ը: Կարտաչեվի և Լիրխարդտի մեթոդներն իրենց ամբողջ կոնկրետությունը պարզաբանված չեն մասսաների առաջ, այդ մեթոդների դեմ պահպանողական տարրերի մղած պայքարը բավարար հակահարված չի ստացել կուսկազմակերպությունների կողմից, մի շարք դեպքում այդ մեթոդները գործնականում կիրառվել են քայլադրողաբար, վորը բացասական հետևանքներ է ունեցել: Բանվորների մի շարք արժեքավոր գյուտերը (Գերլիկի, Մուխինի, Յեվիֆանցեվի և այլն), վորոնք արտադրական հսկայական արդյունքներ են տալիս, վորոչ տեղերում սվիններով էլին դիմավորվում: Չեռքի արտադրության ուղիներն այստեղ բավարար յեռանդով չէր անցկացված, և բայց մաթիմ դեպքերում վորակալ հանքափորերին մեքենայացված հանքերում վոչ-վորակալ աշխատանքի էլին փոխադրում: Իսկ կուսկազմակերպությունները մի շարք դեպքերում աչքաթող են արել այդ, գտնելով, վոր իրենց խողիքներն սպառվում են արտադրության

մասին ընդհանուր բռնաձևեր հանելով միայն: Նրանք
չեն զլիափորել Դոնբասի տեխնիկական հեղափոխու-
թյան համար մասսաների մարտական շարժումը, հետ
են մնացել դրանից և մի շարք դեպքերում գնացել են
այդ շարժման պոչից: Այստեղից ել՝ «ամբողջ վորա-
կը»: Այստեղից ե ղլխում Դոնբասի խորը հետամնացու-
թյան պատճառները:

Յերեսով դեպի տեխնիկական դառնալու խնդրում
նավթը և ածուխը հակադիր բեկոններում են դտնվում:
Բերենք մի որինակ, Մոսկվայի «Մուրճ և Մանդաղ»
գործարանը, վորը բաղաոլթյուն կամ բևեռ չի
հանդիսանում, այլ մի ընդհանուր կարգի որինակ է:
Այստեղ կուսկաղմակերպությունը ժամանակին մորթի-
ղացիայի յե յենթարկել մասսաներին տեխնիկային տի-
րապետելու պայքարում: Նա վերակաղմել և գործարա-
նում ուսուցման ամբողջ գրուլթը, տեխնիկական ժամ
մտցնելով քաղաքական և ընդհանուր կրթական ուսուց-
ման բոլոր ողակներում: Գործարանում դանաղան մաս-
նաղխությունների վերարբերմամբ կաղմակերպված են
մի շարք տեխնիկական խմբակներ, ցելսերում կաղմա-
կերպված են բրիգադներ, վորոնք ուսումնասիրում են
արտադրության տեխնիկայի հարցերը, պարապուրդնե-
թի պատճառները և այլն: «Մուրճ և Մանդաղ» գործու-
թանն արագ կերպով կոմբինատ-դպրոց է կառուցում և
ամբողջ գործարանը ձևոնարկություն—ՌՈՒՀ—ի յե վե-
րածում:

Յեկ համենայն դեպս, այդ բոլոր նվաճումներով
հանդերձ, մենք չենք կարող հավաստել, վոր գործարա-
նում իսկական չրջադարձ է կատարված դեպի տեխնի-
կան: Կուսկաղմակերպությունների կողմից հաճախակի
աչբաթող են արվում խոչորագույն տեխնիկական խրն-
դիրները: Նա իր ամբողջ հասակով չի առաժառուկ կա-
տարելագործված սարքավորման յուրաղման խնդիրնե-
րը, մի շարք գեաբերում ընդհուպ չի մոտեցել արտա-
դրութան թերությունների վերացման:

Գործարանում կատարվում է փոսկատուցում, մի
շարք խոչոր ցելսերը յենթարկվում են հիմնական շինա-
բարության, այդ գործի համար 11 միլիոնից ավելի

դումար և ծախսվում (գլանային, պողպատալարային,
թերթաղանային և կանատային ցելսերի վերակառու-
ցումը, ինչպես և կալիբրային և մողելային նոր ցելսերի
կառուցումը): Սակայն մարտենոլյան ցելսում, վորն
ընդարձակվող ցելսերին հումուլթ է մատակարարում,
չի անցկացվում այն աստիճանի վերակառուցում, ինչ-
պիսին դրանից կախված ցելսերում է անցկացվում:
Արդյունքը լինում է այն, վոր դլանային ցելսի պահան-
ջը հավասար է 185—190 հազ. տոնն ձուլածո-հումուլթ
թի, իսկ մարտենոլյան ցելսը տալիս է ընդամենը
145—150 հազ. տոնն: Գործարանի վարչությունն
ստիպված էր դլանային ցելսի համար ձուլածոյի պահաս
մնացած մասը ձարել դրսից, վորն անդրադարձավ գոր-
ծարանի ամբողջ արտադրության վրա: Իսկ կուսկաղ-
մակերպությունները ժամանակին միջոցներ ձեռք չեն
առել այդ աննորմալ դրությունը վերացնելու համար:

Մի այլ փաստ: Մամուլի ցելսում դրված է Կերմա-
նիայում գնված և միանգամայն սարքավորված «կայ-
ղեր» դաղգյահը՝ սառը դրությամբ բոլտեր պատրաս-
տելու համար: Այդ դաղգյահը կարող է փոխարինել
ներկայումս աշխատող չորս դաղգյահների, վորոնք
բոլտեր են պատրաստում: Բայց դա չի ողտադործվում:
Վոչ վոք չի կարող աշխատել այդ դաղգյահի վրա:
Մինչդեռ նման դաղգյահները փառավոր կերպով ող-
տագործվում են Դնեպրոպետրովսկու մետաղաձուլա-
կան գործարաններում:

Յեկս մի փաստ: Գլանային ցելսում կառուցված է
դանակ (միայն կառուցելը 20 հազ. ուրբլի արժե) սա-
ռը դրությամբ մետաղներ կտրելու համար, իսկ ցելսում
հարկավոր է տաք դրությամբ մետաղներ կտրող դա-
նակ: Արդեն յեկու տարի յե, ինչ չի ողտագործվում
այդ դանակը: Այդ նույն ցելսում առաջ յերեք գլանա-
յին դաղգյահներն սպասարկվում էլին յերեք մեքենա-
ներով: Անց են կացնում «ոացիոնայացում», — և յերեք
դաղգյահներին տրվում է մեկ ուժեղ մեքենա: Սակայն
այդ մեքենան միշտ էլ չի կարողանում սպասարկել յե-
րեք դաղգյահներին: Հետևանքը լինում է պարա-
պուրդներ, և ցելսը չի կարողանում կատարել իր արտա-
դրական ծրագրերը:

Ինքզինքն որինակները պարզապես ցույց են տալիս, թե ինչու՞մ պետք է կայանա մեր ձեռնարկութուններում կուսակազմակերպութունների շրջադարձը դեպի տեխնիկան: Նյանք պետք է ընդհուպ և կոնկրետ մտնենք այն բոլոր տեխնիկական խնդիրներին, վոյսեֆ վեռակոն նշանակութուն ունեն տվյալ նյութի, տվյալ ձեռնարկութուն համար: Ածխային արտադրութիւնն բոլոր պրոցեսների մեքենայացումը (կարելի, գլորելը, փոխադրելը, բեռնելը) և նրա ձեռքի արտադրութիւնն ուսցիտնալացումը, ձուլող ցեխերի մեքենայացումը, գործի ճիշտ կազմակերպումը և մեղադատութեան վառարաններում աշխատանքի նորմալ կարգապահութիւնը, նավթի ճակատում փորելն ամերիկյան արագութիւն հասցնելը և նավթամշակման արդյունաբերութիւնն լայն զարգացումը, ելեկտրատնտեսութիւնում ելեկտրակառուցումների կոնֆիցիւրենտի գորութիւն (կոսիտոս Ֆի) ավելացումը և այլն, — ահա թե ինչ խրնդիրները վրա պետք է կենտրոնացվի կուսակազմակերպութիւնների ուշադրութիւնը:

Իրան համապատասխան անհրաժեշտ է պատրաստել և բնորոշ կարգեր: Ժամանակ է վերացնել այն դրութիւնը, յերբ արտադրութիւնն տեխնիկան իմանալը պարտագիր չի համարվում կուսաշխատակիցների համար, յերբ ձեռնարկութիւնն զեկալար կուսակերտախալի 50—75 տոկոսը չափազանց քիչ և անգամ ամենևին ծանոթ չի տվյալ արտադրութիւնն յտեխնիկային, յերբ կուսաշխատակիցներն անդադար գործարանից գործարան, մի արտադրութիւնից մյուս արտադրութիւնն են «հոսում» (գործարանների բլիճների քարտուղարների աշխատանքի միջին տեղութիւնը 6 ամսից պակաս է): Անհրաժեշտ է հետադադում կուսաշխատակիցների կարգ բնորոշելու և վերապատրաստելու գործում քաղաքական պատրաստակաւութիւնն հիմնական խնդրի հետ միասին հաշվի առնել նաև նրանց տեխնիկական զինվածութիւնը, արտադրութիւնն, նրա զարգացման հեռանկարները և այդ հեռանկարների կենսագործման ուղիներն իմանալը: Կուսակցական ուժերի բաշխման գործում կազմակերպութիւնները պետք է առաջին հերթին

ինչն են արտադրութիւնն ուսցիտնալացման ու վերակառուցման ապահովման և նոր տեխնիկան տիրապետելու խնդիրներին: Կուսակազմակերպութիւնները, այնուհետեւ, պետք է առաջադրեն կոմունիստների և վոյսեֆ րանվիրական մասսայի արտադրական-տեխնիկական դաստիարակման խնդիրը, մասնավորապես, նրանց հետ միասին պետք է մշակեն տվյալ ճշտելի կամ տվյալ ձեռնարկութիւնն վերակառուցման արմատական խնդիրները: Կուսակազմակերպութիւնները՝ կոմունիստների ստրուկտուրայի առաջատար դերի պետք է հասնեն տեխնիկական ճակատում:

Կուսակազմակերպութիւնները ձեռնարկութիւններում վերակազմելով իրենց աշխատանքները, պետք է դիւրաւորեն արտադրութիւնն ուսցիտնալացման և տեխնիկային տիրապետելու համար առաջավոր բանվորների մասսայական շարժումը: Կուսակազմակերպութիւնները պետք է ձգտեն ելլ ավելի լայն և ինտենսիվ ընդարձակելու այդ շարժումը: Սոցմբցումն ու հարվածայնութիւնը դրանով իսկ պետք է բարձրացնել ավելի նոր, ավելի բարձր ստաիճանի, վորի վրա դրանց ավելի բարձր ձեռքը — հանդիպական արդիւնալանը, պրոտոնայերատիւային խմբակները, միջանցիկ բրիգադները և այլն — իսկական մասսայական բնույթ կստանան:

Սա՛ պետք է լինի կուսակազմակերպութիւնների կողմից յերեսով դեպի տեխնիկան դառնալու ուղին:

ՍՄԲՈՂՁ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ
ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Միութիւնն ինդուստրացման արագ տեմպն արտահայտելով է բանվոր դասակարգի մեջ յեղած բազմաթիւ և հսկայական թափի պրոցեսներով: Մասսայական ուսցիտնալացման շարժումը, վորի մասին մենք խոսեցինք նախորդ հատվածներում, այդ պրոցեսներին մեկն է հանդիսանում միայն: Այժմ ամբողջապես բնենք այդ պրոցեսը:

Ամենից առաջ զգալիորեն փոխվում է բանվորական մասսայի կազմը և ստիուկտուրան: Բանվոր դասակար-

գր Իանակապետ աճում է հսկայական չափերով: Միայն 1930 թ. արդյունաբերության մեջ 750 հազար նոր բանվոր է ներհոսել: 1931 թ. արտադրության մեջ սկսոր է ներգրավվեն 2 միլիոն բանվոր և ծառայողներ, վորից 1,3 միլ. բանվորներ:

Վորոչ չափով փոխվում է բանվորական ուժի հավաքման բազան: Արդյունաբերությանը բանվորական ուժ մատակարարելու գործում գյուղում մեծատնտեսներին զուգընթաց սկսում են ավելի և ավելի մեծ դեր խաղալ կոլտնտեսականները— «գյուղում խորհրդային էլշխանության այդ իսկական և ամուր հենարանը»: Արտադրության մեջ ներգրավվում են բանվորների ընտանիքների հարյուր—հազարավոր անդամներ, այսինքն՝ այնպիսի անձինք, վորոնք իրենց սոցիալական դրությունամբ ավելի մոտիկ են պրոլետարիատին: Որինակ՝ ևւկրայինան, 1931 թ. ունենալով 600 հազարից ավելի նոր բանվորների պահանջ, նախատեսել է արդյունաբերության մեջ ներգրավել բանվորների ընտանիքների 200 հազար անդամներ: Ամբողջ Միության մեջ նախատեսվում է 1931 թ. արտադրության մեջ ներգրավել բանվորների 800 հազար կին: Այսպիսով, սոցիալապես զգալիորեն լավանում է բանվորական ուժի մատակարարման բազան:

Միաժամանակ տեղի յե ունենում բանվոր դասակարգի վորակական փափախման պրոցեսը: Արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը, նոր տեխնիկայի յուրացումն ու զարգացումը, ծախալով և տեխնիկական մակարդակով համաշխարհային մասշտաբի հակաների կառուցումը, — այս բոլորը բնականաբար սողեկցվում են մեր բանվորների տեխնիկական վերափոխման, այսպես ասած՝ տեխնիկական «ուկոնստրուկցիայի» պրոցեսներով: Ավելի յե անցյալին մատնվում տեխնիկապես թույլ զարգացած, կապիտալով և յեռանդով թույլ սպառապինված, ցածր և կապիտալիստական յերկրներից չափազանց հետամնաց աշխատանքի արտագրողականություն ունեցող բանվորի տիպը: Բավական է հիշատակել, վոր վերջին յերեք տարում բանվորների կապիտալապինումը բարձրացել է 40%, իսկ յեռանդա-

ղնումն այդ ժամանակամիջոցում բարձրացել է ավելի յատ— 44%: Բանվորների տեխնիկական սպառաղինումն ընթանում է շարունակ արագանալով, — հնդամակի ստաջին տարում նախատեսված է 2—3%—ից մինչև 26—29% վերջին տարում: Դրա հետ միասին բանվորների տեխնիկական սպառաղինման աճումն ընթանում է բանվոր դասակարգի ներսում ներկայումս կատարվող կարեւորագույն պրոցեսների— սոցմրցման և հարվածայնության Փոնի վրա, վորոնց մեջ իրենց արտահայտությունն են գտնում բանվոր դասակարգի հսկայական արտադրական ակտիվությունը և կնտուդիաղմր: Այսպիսով աճում է տեխնիկապես և հաարակակամորեն յորը գարգացած բանվորի տիպը, վորը «գիտության և կապիտալիստական տեխնիկայի վերջին յոսքը» միացնում է «սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդի» հիման վրա նոր ձևի աշխատանքի հետ, — աշխատակի նոր սոցիալիստական կազմակերպման կրողի տիպը:

Բանվոր դասակարգի աճման կենտրոնացած արտահայտությունը հանդիսանում է նրա Բաղաճական գիտակցության և ակտիվության հսկայական բարձրացումը: Այդ առթիվ որինակներ բերելը միանգամայն ավելորդ է: Նրանք ստեղծում են մեր առորյա աշխատանքների ամբողջ Փոնը, նրանք ընկած են Միության սոցիալիստական շինարարության հսկայական հաջողությունների հիմքում: Կանդ առնենք միայն մի որինակի— պրոլետարիատի ավանդարդը հանդիսացող կուսակցության աճման վրա: Վերջին յերկու տարվա ընթացում կուսակցության մեջ մտել են 800 հազար արտադրական բանվորներ, այսինքն՝ մոտավորապես այնքան, վորքան կար կուսակցության մեջ 1929 թ. հունվարի 1—ին: Կուսակցության աճման տեմպը, ի հաչիվ առաջավոր բանվորների, դերագանցում է Միության բանվոր դասակարգի աճման տեմպին, ջնալած վերջինիս փոթորկալից ընույթին: Յել դրա հետ միասին կուսակցության մեջ մտնում են բանվոր դասակարգի իրոք լավագույն տարրերը՝ կադրային բանվորները, գլխավորապես առաջավոր հարվածայինները և հասարակա-

կան աշխատանքների շտապները: Կուսակցութեան աճումը կատարվում է ի հաշիվ հիմնական կորիզի՝ խոշոր ձեռնարկությունների բանվորների, «պրոլետարիատի այդ ամբողջների», վորոնցով վերջերս անշեղորեն և արագ կերպով աճում է կուսակցական խավը: Այդ տրվյալները թվական արտահայտություններով պարզորեն ցույց են տալիս, թե ինչպես է աճում Միությունից բանվոր դասակարգի, արդեն կազմակերպված պրոլետարական ավանգարդի շարքերում գտնված $\frac{1}{3}$ մասի քաղաքական ակտիվությունն ու գիտակցությունը:

Բանվոր դասակարգի ներսում տեղի ունեցող հիշված բոլոր պրոցեսները կատարվում են հակասություններով և իրենց զարգացման դիալեկտիկան ունեն: Դա իր արտահայտությունն է գտնում մի շարք դժվարությունների մեջ, վորոնցով ուղեկցվում են հիշատակված պրոցեսները: Վերջիններս բանվոր դասակարգի աճման և կազմի լավացման պրոցեսը: Դա 1930 թ. ընթացել է և ներկայումս էլ ընթանում է բավականին մեծ դժվարություններով—բանվորական ուժի զգալի պակասությունը և բանվորական կադրերի խոշոր հոսունությունը: Դրանում իր արտահայտությունն է գտնում այն հանգամանքը, վոր, ինչպես ասացինք, կոլեկտիվացման յենթարկվող գյուղն այնքան ամուր է բռնում իր արտադրանքներին, քան առաջ էր: Մյուս կողմից, դեռևս բավարար չափով զարգացած չե պրոլետարիատին մտտիկ քաղաքային խավերից բանվորական մասսաներ հավաքելու գործը: Այս բոլորը գործազրկություն վերացման պայմաններում սրում են բանվորական հարցը, դրա լուծման խնդրում հիշատակված դժվարություններն են առաջադնում:

Նույն դրությունն է տիրում նաև բանվորական մասսաների վորակական վերափոխման պրոցեսում: Միությունից բանվոր դասակարգն ընդհանուր առմամբ բարձրացնում է իր հասարակական, կրթական և տեխնիկական մակարդակը և հիմնականորեն փոխում է աշխատանքի կազմակերպման ձևերը: Դրա հետ միասին մենք առանձին ճյուղերում (որինակ՝ ածուխ, մետաղի արդյունաբերություն, տրանսպորտ) ականատես ենք

լինում աշխարհային խախտման— մեր ձեռնարկություններում աշխատանքի սոցիալիստական կազմակերպման դեմ մանր-բուրժուական տարրերի մղած սլայքարի այդ ցայտուն արտահայտությունը:

Կամ էլ վերջիններս նոր տեխնիկային տիրապետելու դժվարությունները: Մենք յերբեմն այդ բնագավառում հանդիպում ենք իսկական «մանկական հիվանդություն»: Մեր կառուցվող հսկաները հաճախ ապրում են մի ամբողջ տանջալից «ծննդաբերություն չըլան», յերբ նրանք դանդաղորեն և բավականին դժվարությամբ վտղի յեն կանգնում վորպես գործող ձեռնարկություններ: Դա նոր տեխնիկայի յուրացման, Միության բանվորական մասսաների տեխնիկական վերափոխման դժվարությունների բացահայտ արտահայտությունն է:

Նույնը տեսնում ենք նաև քաղաքական բնագավառում: Հսկայական չափով աճում է Միությունից բանվոր դասակարգի քաղաքական ակտիվությունը: Իսկ դրա հետ միասին այստեղ ևս հաճախ «մեռածը, հնացածը կպչում և բռնում է նորին», արգելք հանդիսանում և տեղ-տեղ կատաղի դիմադրություն է ցույց տալիս: Մեր ձեռնարկություններում այժմս էլ դեռ ունենք միջին հաշիվով 1—2 տոկոս խցկված ոտար և դասակարգայնորեն մեզ թչնամի տարրեր: Իացի դրանից, մեր ձեռնարկություններում ունենք միայն վերջերս դյուզից յեկած բանվորների բավականին մեծ խավ, վորոնք դեռևս բավականին կայուն չեն և չեն յեփվել գործարանային կաթսայում, ինչպես և հաճախ սերտորեն կապված են իրենց մանր-բուրժուական տնտեսությունների հետ: Դրանք կաղմում են բանվորական մասսայի մոտավորապես $\frac{1}{4}$ — $\frac{1}{5}$ մասը: Այստեղ բավականաչափ ակնհայտ է բանվորական միջավայրում յեղած բոլոր տեսակի տատանումների և վարանումների սոցիալական արձատնիքը:

Այսպիսով, նաև քաղաքականապես ձեռնարկությունները միանգամայն միատեսակ չեն և ազատ չեն դժվարություններից ու հակասություններից: Այստեղ ևս իրեն դասակարգային «հյուսվածքը» կա: Այստեղ ևս գոյություն ունեն դասակարգային սլայքարի տար-

բեր և դասակարգային ճակատ և փոփոխում: Բանձորահան մասսայում յեղած մի բուռը դասակարգայնորեն թշնամի տարրեր փորձեր են կատարում պայքարել աշխատանքի կազմակերպչության դեմ, պայքարել հարվածայնության և սոցմրցման տապալման ու աղավաղման, ուսցիոնալացման և վերակառուցման տապալման, ինչպես և աշխատանքի սոցիալիստական կազմակերպման դործը դանդաղեցնելու և քայքայելու համար: Այդ տարրերը պայքարում են անկայուն և տատանվող խավերին նվաճելու համար, այդ նպատակով փորձում են ողտադործել նրանց մանր-բուրժուական նախապաշարումներն ու հետամնացութունը, ամեն կերպ ողտագործում են առաջագած դժվարությունները: Մենք ամենևին չպետք է մոռանանք մեր ձեռնարկություններում յեղած այդ քաղաքական «հյուսվածքի» մասին, չնայած ընդհանուր առմամբ բանվորական մասսաների քաղաքական հսկայական աճմանը:

Սակայն բանվոր դասակարգի ներսում կատարվող հիշված պրոցեսներն ինչպիսի խնդիրներ են առաջադրում կուսկազմակերպություններին ձեռնարկություններում: Այստեղ ամենագլխավորը՝ դա կուսակցության 16-րդ համադրմարի կողմից ամբողջ բանվորական մասսայի դասակարգային դաստիարակման և միավորման մասին առաջադրված խնդիրն է, — «Սուսմայր խավերը պետք է հետամնաց խավերին սովորեցնեն սոցիալիստական ձևով աշխատել...» (16-րդ կուսհամագումարին ընկ. Կազանովիչի տված զեկուցումից): Բանվորական մասսաներում կատարվող հսկայական դրական պրոցեսներն այդ խնդիրներն իրականացնելու կատարյալ հնարավորություն են տալիս: Իսկ այդ պրոցեսների դժվարությունները և հակասությունները պետք է վերացնել, բարձրեցնել խնդիրները պարզորեն դնելու և դրանք յեռանդով լուծելու միջոցով:

1. Կուսկազմակերպությունները ձեռնարկություններում պետք է սոցմրցման և հարվածայնության մեջ ամբողջ ուժով յերևան հանեն այն մոմենտները, վերոնք ընկ. Մատլինը հատկապես ընդգծեց բանվոր դասակարգի այդ շարժման մեջ, ասելով — «... սոցմրցման

սկզբունքը՝ դա առաջավոր բանվորների կողմից հետամնացներին ոգևության դալն և՛ ընդհանուր վերելքին հասնելու համար»: Մենք արդեն այդ ուղղությամբ սոցմրցման բաղձաթիվ ձևեր ունենք. հասարակական բուրժուարը, հետամնաց բանվորների նկատմամբ առաջավոր հետուզիստների շեփոթյունը, բրիգադներում նոր բանվորներին հին կադրային բանվորներին կցելը և այլն: Իայց և այնպես հետամնաց խավերը դեռևս թույլ են մասնակցում սոցմրցմանն ու հարվածայնությանը: Շատ ձեռնարկություններում բանվորների կողմի մինչև 30—40 տոկոսը դուրս են գտնվում այդ մեծ շարժումից: Անհրաժեշտ է ամենուրեք լայնորեն ծավալել սոցմրցման ու հարվածայնության այդ բոլոր ձևերը և դրա հիման վրա սոցմրցումը բարձրացնել նոր և ավելի բարձր աստիճանի: Սոցմրցումը պետք է լինի գրկի բանվորների վողջ մասսան, դասակարգայնորեն դաստիարակելով և կամայաբեղով նրանց: Դրա համար սոցմրցումը զորգանալով պետք է վերածվի դանազան ձևերի մի ամբողջ սխտեմի, վերոնցից յուրաքանչյուրը պետք է առանձին ձևով մոտենա բանվորական մասսայի գանազան խավերին: Սոցմրցման և հարվածայնության այդ բաղձաթիվ ձևերի բովանդակությունը պետք է համապատասխանի բանվորական մասսաների բաղձաթիվ կազմին, պետք է յուրաքանչյուր դեպքում ընդգծի արտադրական աշխատանքների դանազան մոմենտները, — աշխատանքի կազմակերպչության ամրացման ամենապարզ խնդիրներից մինչև ամենաբարձր ուսցիոնալացման ձեռնարկումները: Հենց այդ հիման վրա պետք է աստիճանաբար իրականացվի բանվորական ամբողջ մասսային սոցմրցման ստորին ձևերից մինչև ամենաբարձր ձևերի, ամենապարզից ամենաբարձր ձևերի փոխադրումը:

Լավագույն ձեռնարկություններն արդեն շարժումներ են կատարում այդ ուղղությամբ: Վորպես որինակ վերցնենք «Կրասնի Տրեուզոլնիկի» փորձը: Կուսկազմակերպությունն այստեղ բացառիկ հետաքրքիր աշխատանք է կատարել ներարդյունաբերական միջոցների մոբիլիզացիայի գործում բանվորական վողջ մասսային

ներգրավելու համար: Կամպանիայի կմախքը հանդիսանում է ելին բանվոր-սլանավիկները, մասնաշաղկան ռացիոնալացման շարժման մասնակիցները, լավադուլն արտադրողներին՝ հարվածայիններին, ռացիոնալիզատորներին և գյուտարարներին հավաքվածները: Կամպանիայի ընթացքում, իրենց՝ բանվորների գնահատականով, նրանք դառել էին մասսաների իսկական կազմակերպիչները՝ բոլոր տեսակի մանր ու խոշոր արտադրական թերությունների դեմ պայքարելու գործում: Ահա ձեզ, որինակ, կրկնակոչիկի գործարանի 16-րդ արհեստանոցի սլանավիկի աշխատանքը: Այստեղ բանվոր-սլանավիկը հետևում է, վորպեսզի իր ժամանակին և լրիվ կերպով նյութեր մատակարարվի արտադրությանը (16-րդ արհեստանոցին մատակարարում են միջանի ցեխեր): Յերբ աշխատանքի սկզբին պարզվում է, վոր նյութերի կոմպլեկտը լրիվ չէ, ապա բանվոր-սլանավիկն անմիջապես կապվում է (վարչության հետ միասին) մատակարարող ցեխերի վարչությունների և սլանավիկների հետ ու լրիվ նյութեր է ստանում: Ապահովելով նյութերի մատակարարումը, բանվոր-սլանավիկը ձեռնարկում է արտադրական պրոցեսների հաշվառման, ձգտելով, վորպեսզի արտադրվի պահանջված քանակության կրկնակոչիկներ: Հաշվի յեռ առնվում ամենափոքր պարագուրդները, առանձին աշխատակիցների ամենաչնչին թերացումները՝ կոնվեյերի ամբողջ կոլեկտիվի հետ միասին, ինչպես և ժամանակին փոխադրական միջոցներ տալը՝ արհեստանոցից պատրաստի սպրանքներն ուղարկելու համար: Այնուհետև բանվոր-սլանավիկը պայքարում է արտադրանքի վորակի համար, նա ուշի-ուշով հետևում է խտանքի ամենափոքր պատճառներին և ջանում է վերացնել դրանք:

Ռացիոնալացման աշխատանքներին գուղընթաց գործարանում տեղի յե ունենում աշխատավորների ինքնաստուգումը: Հաշվի յե առնվում յուրաքանչյուր բանվորի սոցիալական դեմքը, վորն ողնում է կղղիացնելու հակադիր տարրերին, ներգործելու հետամնացների վրա, ներգրավելով նրանց հարվածայնության ընդհա-

նուր հունի մեջ: Ամբողջ աշխատանքը տարվում է հասարակական ուղիով: Ղրա կենտրոնը հանդիսանում են արտադրական բրիգադները խմբակային և արտադրական խորհրդակցությունները: Հետևանք լինում է այն, վոր հետամնաց բանվորները մասնաշաղկանորեն լծվում են սոցմրցման: Սա հանդիսանում է կատարման այն ցայտուն որինակը, վորի մասին ընկ. Կադանովին ասաց 16-րդ կուսհամագումարում: «Առաջավոր հարվածային բանվորները չպետք է պարփակվեն իրենց մեջ, այլ սլիտի լինեն այն ավանգարդը, վորը պետք է վերամշակի, վերադաստիարակի և սոցիալիստական շինարարության մասնակից դարձնի այն հետամնաց խավերին, վորոնք դեռևս լավ չեն մասնակցում, վորոնք արտադրությանը խորթ աչքով են նայում, վորոնք դեռևս չեն գիտակցում իրենց դասակարգային շահերը, վորոնք հաճախ դասակարգային շահերը փոխարինում են ցեխային շահերով»:

«Կրասնի արեուգոլնիկի» փորձը պետք է լայնորեն ընթարինակվի Միության բոլոր ձեռնարկությունների կողմից:

Սոցմրցումն ու հարվածայնությունը պետք է ընդգրկեն բանվորների ամբողջ մասսան և դառնան «պրոլետարական մասսաների դասակարգային դաստիարակման իսկական դպրոցները» (կուսակցության 16-րդ համագումար): 1931 թիվը պետք է մճոսական առաջխաղացում ստեղծի այդ բնագավառում:

2. Սոցմրցմամբ ու հարվածայնությամբ բանվորների վողջ մասսաներին ընդգրկելու հաջողության համար պահանջվում է, վորպեսզի արտադրության մեջ յուրաքանչյուր բանվոր իր պարգորոշ տեղն ունենա: Մեքենաների, դազդյահների համար ճիշտ կոնկրետ նորմա ու պատվերներ (задания) չլինելու պայմաններում չեն կարող կայուն հիմքեր լինել հարվածային շարժման համար: Արտադրության անկազմակերպվածությունը և վատ դրվածքը կազմալուծում ու փոչխացնում են բանվորական մասսաների յեռանդը և ակտիվությունը:

Մեր ձեռնարկություններում միայն հիմա յե

